


Հ. ՊԱՐՈՆՅԱՆ



891.99
7-34

ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

19 NOV 2011

891.99

7-34

u


ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺ
ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ
ՔԱՂՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

Կազմեց՝ Հ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ



48563ռռ



22214-59 (9467-53)

Главлит № 82435.

Тираж 2500 экз.

Типогр. ГИЗА „Красный Пролетарий“ Москва, Пименовская ул., д. № 16.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺ

Հակոբ Պարոնյանից մեզ հասել է նաև յերկու կատակերգութիւն—«Արեւելյան ատամնաբույժ» և «Պաղտասար աղբար»։ Պարոնյանն ունեցել է նաև «Պուռլզ» անունով մի թատերական գրվածք, վորի մի տեսիլը տպագրվել է 1892 թ. «Մասիս» թերթում, բայց այդ գրվածքը ամբողջութեամբ լույս չի տեսել։

«Արեւելյան ատամնաբույժը» Պարոնյանի վոչ միայն առաջին թատերական յերկն է, այլև առաջին գրվածքը, վոր նա հրատարակել է 28 տարեկան հասակում։ Դա հինգ գործողութիւնից բաղկացած յերգախառն զավեշտ-կատակերգութիւն է։ Ընտանեկան անհամաձայնութիւնը և ամուսնական դավաճանութիւնը, վոր ներկա դեպքում առաջանում է ամուսինների անհամապատասխան տարիքի և կնոջ ոժիտի պատճառով, կազմում է գրվածքի կորիզը։

Ատամնաբույժ Թափառնիկոսը (45 տարեկան) դավաճանում է իր կին Մարթային (60 տարեկան) և սիրում է վաճառական Թովմասի (70 տարեկան) կնոջը—Սոֆիին (40 տարեկան)։ Դադտնիքը բացվում է՝ բանալով միաժամանակ և մի այլ գաղտնիք—բանից դուրս է գալիս՝ Թովմասն ու Մարթան ել ջահել, բայց ամուսնացած ժամանակ սիրային կապեր են ունեցել։ Այսպիսով բոլորն ել ստիպված են լինում փակել պատվի և վիրավորանքի հարցը և հաշտվել։

Այս ընտանեկան «իդիլիայի» լրացուցիչ մասն է կազմում մի կողմից Թափառնիկոսի աղջկա՝ Յերանյակի թեթևալիկ պատկերը, մյուս կողմից Թափառնիկոսի ատամնաբուժական «հմտութիւնը»։ Տալիս ենք մի քանի հատված—ամուսինների կռիվը և ատամնաբույժի «արվեստը»։

Հ. Հով.

ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ

Ա Ր Ա Ր Վ Ա Մ Ի.

Տ Ե Ս Ի Լ Ա.

Մարթա.—(Բարկությամբ ներս կ'մտնե ծառան կանչելով) Նիկո... Նիկո... Աս վերջապես դիմանալու բան չե. ալ համբերութունս հատալ. ամեն գիշեր սպասել և դարձյալ միս մինակ պառկել... շաբաթը գիշեր մը միայն տունը կ'պառկի. մյուս գիշերները... չգիտեմ ուր Պիտի հարցնեմ իրեն նայիմ գերի՞ առավ զիս այս տանը մեջ... ստակովս գերի ըլլալ չեմ ուզեր: Վո՛չ... գիտեմ զիս ինչու համար միս մինակ կ'թողնու. վասն զի յես ալ ծեղացած եմ. թե վոր տասնութեց տարու որիորդ մը ըլլայի, աս ճամբան չեր բռներ...

Արդարեւ, իրմե տասնըհինգ տարի մեծ եմ, բաց իր ոճիքեն բռնելով՝ յեկուր ինձի հետ կարգվի չըսի՝ իրեն: Ինքը հոժար կամքով և մանավանդ աղաչելով ամուսնացալ հետս, վասնզի աղվոր եյի... վասն զի հարուստ եյի... վասն զի ուսումնական եյի... վասնզի ստակ ունեյի... և հիմա ամեն գիշեր գլուխն առնե կերթա, ակոս պիտի քաշեմ ըսելով...

Դրսե՛ն կը ըսի թախանիկոսին ճայնը—թի բա թի բա թի բա թի բա թի...

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՄԱՐԹԱ ՅԵՎ ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Թափ.—Թիրարա, բարե՛ անուշիկս:

Մարթա.—(Մեկուսի) Անուշիկը:

Թափ.—Ինչո՞ւ համար առանձին նստեր ես, նոնոշիկս:

Մրթ.—(Բարկությամբ) Չեմ գիտեր:

Թափ.—Տիկինը այսոր բարկացած ե. հա՛, հա՛, հա՛, ծերո՛ւկ տիկին:

Մրթ.—(Բարկությամբ) Ծերուկ տիկին, և կհանդգնի՞ս:

Թափ.—Չհանդգնելու ի՞նչ կա:

Մրթ.—Կուգե՞ս վոր բերանս բանամ:

Թափ.—Բա՛ց, վոր հով առնես:

Մրթ.—Յերկուշաբթի գիշեր ո՞ւր եյիր:

Թափ.—Հիվանդ նայելու գացեր եյի:

Մրթ.—Յերեքշաբթի՞:

Թափ.—Մեկուն ակոսն քաշելու:

Մարթ.—Չորեքշաբթի՞:

Թափ.—Ակոս լեցնելու:

Մրթ.—Հինգշաբթի՞,

Թափ.—Ակոս պարպելու. հա՛, հա՛, հա՛, մեր տիկինը որացույց ե. շաբթվան բոլոր որերը անսխալ կցուցնե:

Մրթ.—Ա՛յո, պարոն, որացույց մ'եմ և այնպիսի որացույց մը, վոր մինչև վերջին շունչդ չպիտի փոխես: Յերեկ գիշեր ո՞ւր եյիր, ո՞ւր կորսված եյիր, վո՞ր ծակը մտած եյիր:

Թափ.—Յերեկ գիշեր կորսված չեյի. թատրոն մտած եյի, ուր ազգային ներկայացում մը տվին: Հայ յեղողը պետք ե ազգային հանդեսներուն ներկա գտնվի:

Մրթ.—Առանց ինձի թատրոն կերթաս:

Թափ.—Թատրոնը ծերերու համար չե:

Մրթ.—Հապա ձեզի՞ համար, յերթալ անկե վարպետություններ սորվիլ և յետքը ձեր կինները խաբել... սրիկա՛, դուն իմ ստակովս մարդ յեղար, համբալ ստացար, հիմա զիս միս մինակ թողլով գլուխդ կառնես, թատրոն կերթաս:

Թաւի.—Ուրիշ անգամուն գլուխս քեզի կը ձգեմ, անանկ կերթամ:

Մրթ.—Կը ծաղրե՞ս զիս, խայտառա՛կ, իմ ստակովս մարդ յեղար... առանց ինձի թատրոն կերթաս, այնպէս չե՞:

Թաւի.—Այնպե՛ս ե:

Մրթ.—Պարո՛ն, քեզի բան մը հարցնեմ, գիտե՞ս, թե ինչ ե կին մը:

Թաւի.—Այո՛, գիտեմ. կին մը իր ամուսնուն գլխուն փորձանք ե:

Մրթ.—Լեզուդ չորնա, ինչպէս ալ առանց կարմրելու կը համարձակիս ըսելու, թե փորձանք ե. մինչդեռ բոլոր աշխարհ կը վկայե, վոր դուն իմ ստակովս մարդ յեղար: Պատասխան տուր նայի՛մ:

Թաւի.—Տա՛մ:

Մրթ.—Պապանձե:

Թաւի.—Պապանձիմ:

Մրթ.—Բերանդ գոցվի, զրուցե՛, գերի՛ առիւր զիս այս տանը մեջ:

Թաւի.—Ինչո՞ւ գերի պիտի ըլլաս. կին մը տանը մեջ կան կարասիք կսեպվի:

Մրթ.—Կան կարասիք... տեսեք ինչ պաղարյամբ պատասխան կուտա:

Թաւի.—Երիկ մարդիկ պաղարյուն են, կնիկները տաքարյուն. (մ ե կ ու ս ի) ամառը:

Մրթ.—Անորե՛ն մարդ, ըրածիդ կհափնի՞ս, ամուսնութեան մեջ միշտ վեճ, կռիվ կվայլե՞:

Թաւի.—Առանց կովո ամուսնութեանը անլի կերակուրի կնամանցնեն խոհարարները:

Մրթ.—Դիտցի՛ր, վոր այդ խոսքերը մանվանս պատճառ պիտի ըլլան, ասանկ կյանք անցունել չըլլար. յես ապրիլ կուգեմ, մանավանդ շա՛տ ապրիլ:

Թաւի.—Ինձի՞ ինչ կըսես, Արվեստ յերկայնակեցութեան կարդա:

Մրթ.—Լռե՛, անգութ, ափսոս վոր ինձի պես պարկեշտ կին մ'ունիս:

Թաւի.—Գու տարիքիդ մեջ կանայք պարկեշտ ըլլալու յեն:

Մրթ.—Ալ բա՛վ ե, պիտի լռե՞ս:

Թաւի.—Դուն ա՛լ լռե:

Մրթ.—Ամուսնութեան կապը կամաց կամաց թուլանալ սկսավ:

Թաւի.—Տաքեն անանկ կըլլա:

Մրթ.—Բոլորովին պիտի քակվի, գիտե՞ս:

Թաւի.—Ձանիկա կապողը պինդ կապեր ե, չքակվիր:

Մրթ.—Յես կը քակեմ:

Թաւի.—Գեշ չըլլար:

Մրթ.—Բոլոր լրագիրներու մեջ հրատարակել պիտի տամ, թե Թափառնիկոս իր կնոջ թողուց:

Թաւի.—Շատ աղեկ խորհեր ես. ասով բարութիւն մ'ըրած կըլլանք. թե վոր մեզի պես կովող ամուսիններ ալ գտնվին, անոնց ուրինակ կըլլանք, թող անոնք ալ բաժնը վին:

Մրթ.—Ինչպէս կերեի, դուն չես ամչնար:

Թաւի.—Ամչնալու ի՞նչ կա վոր:

Մրթ.—Յերբ ըսեն, թե Թափառնիկոս կինը թողեր ե:

Թաւի.—Պիտի ըսեն, թե պատերազմեն վողջ դարձեր ե:

Մրթ.—Շատ աղեկ. մնաք բարով:

Թաւի.—Յերթաք բարով:

Մրթ.—Ապրիս...

Թաւի.—Դուն ալ ապրե:

Մրթ.—Ուրեմն մնաք բարով:

Թաւի.—Յերթաք բարով:

Մրթ.—Վերջինն ե, վոր կըսեմ, աղեկ խորհե ե անանկ
պատասխանե. մը...նաք...բա...ը...ո...վ:

Թափ.—Յերթաք բարբը...ով...

Մրթ.—Քեզի դեմ դա՛տ պիտի բանամ:

Թափ.—Բա՛ց:

Մրթ.—Տանդ դռները պիտի գոցեմ:

Թափ.—Գոցե՛:

Մրթ.—Ընդհանուր ժողովքը պիտի յեղնեմ:

Թափ.—Յելի՛ր:

Մրթ.—Վերջին թաղական պիտի իջնամ:

Թափ.—Իջի՛ր:

Մրթ.—Վերջը կը տեսնվինք (կ ե ը թ ա):

Տ ե ս ի լ Դ.

Թափառնիկոս.—(Ա.ռ.ա.ն.ձ.ի.ն) Կորսվեցավ, զնաց
թշվառականը: Առավոտուն յելեր, կռիվ ընելու պատճառ
կը փնտռե: Վաթսուն տարվան յեղեր ե, սիրվիլ կուզե...

Ներս կը մ՛սնե Մարկոս (ա դ ք ա տ գ ո ը ծ ա վ ո ը):

Մրկ.—Եհ, պարոն, ահաա կը ցավի:

Թափ.—Արդեն աչքեդ հայտնի յե, վոր ահաա կը ցավի:

Մրկ.—Կաղաչեմ, պարոն ատամնաբույժ, ձեռքեդ յե-
կածը մի՛ խնայեր զիս բուժելու համար: Ձեր համբավը
Պոլսո մեջ ամբողջ տարածվեր ե. յես ալ ձեր անունը
լսելով փութացի հոս գալ վորպեսզի...

Թափ.—Վասնզի արվեստս կանոնավոր կերպով առաջ
կտանիմ: Յես Յեվրոպայի մեջ ուսյալ բժիշկներեն չեմ.
Իմ բժշկությունս բնականն ե: Ինձի յեկող հիվանդները
միշտ գո՛հ կըլլան. կհուսամ, վոր դուն ալ անոնց պես
շնորհակալությամբ պիտի յերթաս:

Մրկ.—Շատ աղեկ...

Թափառնիկոս.—Մեկ հա՛տ մը միայն կցավի, չե նե
ամենն ալ...

Մրկ.—Մեկ հատ, պարոն, մեկ հատ:

Թափ.—Մեկ հատ կամ յերեսուն յերկու հատ ըլլա,
չե ինձ փուլթ. ինձի համար միևնույն բանն ըսել ե:

Մրկ.—(Մ ե կ ու ս ի) Ճարտար մեկու մը կը նմանի:

Թափ.—Շատո՞նց ի վեր ե, վոր ունիս այդ ցավը:

Մրկ.—Շուրջ յերկու շաբաթ:

Թափ.—Արվեստդ ի՞նչ ե:

Մրկ.—Վաճառական մը...

Թափ.—(Թ ի կ ն ա թ ո ո ե ն յ ե լ ն ե լ ո վ) Ներեցեք,
յեթե չկըցի ճանչնալ զձեզ, հրամմեցեք հոս նստեցեք.
Վոտքդ պաղնեմ, յեկեք թիկնաթոռը նստեցեք:

Մրկ.—Հոգ չե, պարոն, աշխատ մ'ըլլաք:

Թափ.—Կաղաչեմ (Մ ա ը կ ո ս թ ի կ ն ա թ ո ո ի վ ը ա
կ ն ս տ ի), շարունակեցեք...

Մրկ.—Վաճառական մ'եյի ատենոք, իսկ հիմա ջա-
ղացքի մը մեջ գործավոր եմ...

Թափ.—(Մ ե կ ու ս ի) Սա անորեն կնկանս պատճա-
ռավ այսոր գործերս ձախորդ կերթան:

Տ ե ս ի լ Ե.

ՆՈՒՅՆՔ ՅԵՂ ՆԻԿՈ (ծառան).

Նիկ.—(Ս ու ը ճ ը բ ե ը ե լ ո վ) Տեր...

Թափ.—(Մ ա ը կ ո ս ի ն) Ինչպե՞ս անցուցիր այս
գլխեր:

Մրկ.—Ամենին աչքս չգոցեցի:

Թափ.—(Ն ի կ ո յ ի ն) Մինչև վոր սուրճս խմեմ, դուն
նախապատրաստությունները լմցու, Նի՛կո, պարոնին ահ-
ռան պիտի քաշենք:

Նիկ.—Այո՛, տեր իմ:

Թափ.—Ուշադրությամբ ըրե, վոր չվախենա:

Նիկ.—Այո՛, տեր:

Թափ.—Նայե, վոր բռնություն ձեռք չառնենք:

Նիկ.—Այո՛:

Թաշի.—Անուշուրթյամբ լմնցուր:

Նիկ.—Շատ աղեկ (սեղանին վրայ են չվան մը կառնու): Գովս յեկուր, յեղբայր:

Թաշի.—Գովը գնա:

Նիկ.—(Մարկոսին ձեռները կապել կուզե, վորը չթողնուր) Թող տուր վոր կապեմ:

Մրկ.—Ինչո՞ւ, յեղբայր, յես խեղճ եմ. փառք աստուծու խելքս գլխուս ե. ահռայի ցավ ունիմ:

Թաշի.—Հնազանդություն, պարոն իմ, բանեցուցած կերպերս թեպետ և հիվանդներուն անհաճո կերևին, բայց վերջեն հաճությամբ դուրս կելնեն, թող վոր կապե, թող, թող...

Մրկ.—Բայց...

Թաշի.—(Սեղանին վրայ են ատրճառակն առնելով Մարկոսին կուզողը)—Հնազանդություն:

Մրկ.—Թո...թո...թող...կենա:

Թաշի.—Մի՛ վախնար, իմ սովորությունս ե. յերբ մեկուն ահռան պիտի հանեմ, ձեռները կը կապեմ. անհող յեղիւր դուն, սեպե թե ահռող յելավ. հիմա իմ հարցումներուն պատասխան տուր. արեւելյան թե արեւմտյան կողմը:

Մրկ.—Ձաղա՞ցքը կը հարցնեք, պարոն, հոս մոտ պարտեզին մեջն ե:

Թաշի.—Ատիկա իմ հարցմանս պատասխան չե... վարի՞ հարկն ե, չե նե վերի:

Մրկ.—Վերի հարկը, պարոն, վերի հարկը. հիսուն դահեկան ամսականով վարձեր եմ. պզտիկ սենյակ մե. ձմեռը շատ տաք կըլլա...

Թաշի.—Չհասկցար իմ հարցումներս. բերնիդ վո՞ր կողմն ե ցավող ահռան:

Մրկ.—(Մատովը կցուցնե աջ կողմը) Ահա, պարոն, աս կողմը:

Թաշի.—Յես ալ քեզի աս հարցուցի, և դուն ջաղացքին պարտեզին մեջ ըլլալն ըսիր: Վարի՞ շարքեն ե ցավող ահռան:

Մրկ.—Այո՛, այո՛: Ահա՛ (ցցունելով) վարի շարքեն:

Թաշի.—Յեւ դուն սենյակիդ վերի հարկը և տաք ըլլալը ըսիր: Յես բերնին մեջ գտնված տեղերուն և գործիքներուն մեջ մեկ անուն տված եմ և միշտ անանկ կը հարցնեմ. կուզեմ, վոր ինձի յեկող հիվանդներն ալ սորվին: Ե՛հ, գործը լմնցավ, ցավող ահռային ուր ըլլալն ալ իմացանք. հիմա դայն հանել աշխատելու յե: Նիկո՛, սա ատրճառակը ա՛ռ և պարոնին դեպի բերանը ուղղե:

Մրկ.—(Վախենալով) Ի՞նչ կըսեք, պարոն:

Թաշի.—Ամենափոքր շարժում մը ընելուն պես՝ պարպե՛:

Մրկ.—(Թոթովելով) Թող կենա, չեմ ուզեր:

Թաշի.—Լռե՛, պիտի պարպե:

Մրկ.—(Արձանի պես կը կայնի անշարժ):

Թաշի.—Բերանդ բաց... քիչ մալ բաց, վոր լույսը ներս մտնե, կըցածիդ չափ բաց... սա պզտի փատը մեջտեղը դնեմ, վոր չգոցվի (կդնե). հա՛, այսպես կեցիր, ալ վախ պետք չե. սեպե թե ահռող յելավ:

Մրկ.—Ըհ...ուհ...ըհ...

Թաշի.—(Դիտակով Մարկոսին բերնին մեջը կնայի) Չկըցի տեսնել: Նիկո, սա ճրագը վառե. ինչ անտեսանելի ահռա. նայինք ճրագով պիտի կարենա՞նք գտնել (ճրագը Մարկոսին բերնին կմոտեցնե):

Մրկ.—(Յետ-յետ կերթա) Ա՛հ:

Թաշի.—Նիկո՛, կապե՛ վոտքերը:

Նիկ.—Կը հնազանդեմ, տեր (կը կապե):

Թաշի.—(Աթոռի վրա կելնե) Ծո՛ւնկ չոքե, շուտ յեղիւր. ժամանակ չկորսնցնենք (աքցանը բերնին մեջ կխոթե և կըսկսի քաշել) Ա՛հ, փատը ինկավ:

Մրկ.—Ի՞նչ կընեք, պարոն, լեզուս պիտի փրցնեք:

Թաշի.—Մարդս կսխալի յերբեմն:

Մրկ.—Կաղաչեմ, թող աքցանը և ուրիշ կերպով, յեթե հնար ե հանել, կատարե. ապա թե վոչ, յես պիտի յերթամ:

Թաշի.—Տեսակ-տեսակ գործիքներով հառաջ կվարեմ արվեստս: Կոնակիդ վրա պառկե, զափակս, յես մինչև հիմա կընայի քու բոլոր ակումներդ քաշել, այլ ինչ ընեմ, վոր քիչ մը բարկացած եմ այսոր. պառկե, տղաս, պառկե, սեպե թե ակառդ յելավ: (Մարկոս կը պառկի. Թաշի առնի կոսը սեղանին վրայեն դերձան մը առնելով) Սա դերձանը ակառիդ պիտի կապեմ... բաց բերանդ... տեսա... ահա կապեցի, անհոգ յեղիր... տեղեդ չյերբերաս... Նիկո, ատրճանակը շտկե (Մարկոսին առջևը կը նստի և վոտները Մարկոսին վոտներուն կռթնած կսկսի քաշել) Կը ցավի՞... համբերե՞... ինչ ընենք... հիմա պիտի յեխա... թշվառ տղա, ընկ՞ող կտորեցիր, ինչ ըրիր, վոր ասանկ...տեր վորդորմյա անանկ ակառ մը, վոր տեղեն չշարժիր:

Մրկ.—(Պոռալով) Ահ, ուհ, բուֆ...

Թաշի.—Նիկո, ատրճանակը մի՛ թողուր... համբերու-թյուն, տղաս, սեպե թե ակառդ յելավ (քիչ մ'ալ ուժով կքաշե, դերձանը կփրթի, ինքն ալ կռնըկի վրա կիյնա):

Մրկ.—Ա՛հ... ա՛հ... (վոտք յելնել կջանա):

Թաշի.—Ինչո՞ւ կելնես, պառկե՛, տեղեդ մի՛ շարժիր, (ուրիշ դերձան մը կը հանե, կը կապե ցավող ակառն) այս անգամ ալ թե վոր չհաջողիմ... (կսկսի քաշել) ահա ձայն մ'առի, պիտի յեւա...

Մրկ.—Ա՛հ, պարոն, թող տուր յելնեմ:

Թաշի.—Պապանձե, ահա յելավ... ահա... քիչ մ'ալ համբերե... (ուժով կքաշե). ահ վերջապես հաջողեցա...

(ակառն Մարկոսին տալով) ա՛ռ ակառդ... ինձի թափառնիկոս կըսեն...

Մրկ.—Գիտե՞ք, պարոն, վորքան դժվար ե ակառի ցավ քաշելը:

Թաշի.—Գիտե՞ք, պարոն, վորքան դժվար ե ակառ քաշելը:

Մրկ.—Վողջ ըլլաք... բայց ցափն փոխանակ մեղմանալու, սաստկացավ:

Թաշի.—Առջի բերան անանկ կըլլա:

Մրկ.—(Մատվըն երով ակառն երը զննելով) ցավող ակառն հոս ե, ահա տե՛ս, դուք սխալմամբ քովի ակառն քաշեր եք:

Թաշի.—Կեցիր (Մատվըն երով կքննե ակառն երը) իրավունք ունիք... բայց դիտմամբ քովի ակառն քաշեցի:

Մրկ.—(Բարկությամբ) Դիտմամբ... մեղք չե՞ իմ վողջ ակառիս վոր...

Թաշի.—Ի՞նչ ըսեմ, տղա, դուն անմիտ ես... թե վոր այս ակառն չհանելի, մյուսը շատ դժվարությամբ պիտի կընայինք քաշել. չեմ հուսար, վոր իմ այս խոսքիս չհամողվելու չափ տխմար ըլլաս. կը հարցնեմ քեզի, միթե՞ կընան ծառ մը խլել, թե վոր արմատը աղեկ չբանան...

Մրկ.—Եհ, իմ բերանս պարտե՞ղ ե:

Թաշի.—Իմ ըսածս նմանություն մ'ե: Յես քեզի չափ չե՞մ խորհիր, վոր ցավող ակառն մեկեն ի մեկ հանեմ, հա, հա, հա: Յես կուգեմ, վոր ընելիք գործս առաջուց մտածեմ, վերջը կատարեմ. կը հասկնա՞ս: Ալ վախ չկա ասոր, արմատը աղեկ բացվեցավ:

Նիկո.—Ամենուն ալ ասանկ կընենք:

Մրկ.—Տակավին պիտի խոսի՞նք. ինչ վոր պիտի ընես, ըրե՛, լինցուր, շուտ յեղիր, շուտ...

Թաշի.—Կամաց քալողը չհոգնիր, կըսե առածը:

Մրկ.—(Մ ե կ ու ս ի) Անգամ մը վոտքս դռներն դուրս
կոխեմ... (բ ա ռ կ ու թ յ ա մ բ) շո՛ւտ յեղիւր, յես ձեր խա-
ղալի՞քն եմ:

Թաշի.—(Վ ո ռ ս ե դ ա ն ի ն վ ը ա յ ի ն շ ի շ ե ռ ը
կ ը խ ա ո ն ե ի բ ը թ ե բ ա ն մ ը կ ը փ ն տ ո ե)
Փատը... փատը դիր բերանը. ապերա՛խտ, հոգով մարմնով
կաշխատիմ քեզի ծառայություն մ'ընելու և դուն կը
հանդգնիս առանց ամչնալու ինձի դեմ խոսի՛լ. ի՞նչ յե-
ղար՝ համբերե քիչ մ'ալ... Ահա մոտ յեկուր. յերեկու
ժամե ի վեր քեզի համար դեղ կը փնտռեյի, ահա գտա
(շ ի շ մ ը տ ա լ ո վ) ա՛ռ ասիկա, բամբակի վրա քանի մը
շիթ կաթեցուր, որը ութն անգամ ցավող ահուային վրա
դիր: Քանի մը որ ասիկա ըրե. տեսար վոր ցավը կավել-
նա, ինձի յեկուր, սեպե թե բժշկվեցար: Կայնե, հիմա
բերնեդ հանեմ սա փատը: Նիկո՛, վոտները, ձեռները քակե՛
(Ն ի կ ո կ ք ա կ ե). հասկցա՞ր, տղա՛ս, կարծեմ թե առանց
քաշելու այդ ցավող ահուան, պիտի բուժիս:

Մրկ.—(Ս ե դ ա ն ի ն մ ո տ ե ն ա լ ո վ ա տ ը ճ ա -
ն ա կ ը կ ա ո ն ե) Պատասխա՛ն տուր հարցումներուս,
արեւելյա՞ն ե թե արեւմտյան:

Թաշի.—Աս ի՞նչ պիտի ըլլա:

Մրկ.—Ամենափոքր շարժում մը կընա մահ պատճա-
ռել. Նիկո՛, ձեռները կապե՛:

Նիկ.—Պարոն...

Մրկ.—Հիմա կմեռցնեմ, շուտ կապե. (Թ ա փ ա ո -
ն ի կ ո ս) վերի՞ թե վարի հարկն ե:

Թաշի.—Կորի սըկե, գարշելի...

Մրկ.—Ապերա՛խտ, ինձի դեմ կը խոսի՞ս. Նիկո փատը
դիր բերանը:

Թաշի.—Վերջապես պիտի...

Մրկ.—Համբերություն, սովորությունս այս ե, կը
կապեմ... Թեպետ և իմ բռնած ընթացքս հիվանդներու

տհաճո կը թվին, բայց վերջը դո՛հ կըլլան. (ա ք ց ա ն ը
ա ո ն ե լ ո վ) համբերե՛, սեպե, թե ահադ յելավ:

Նիկո.—(Մ ե կ ու ս ի) Յես յերթամ, չըլլա վոր իմս
ալ ահուան քաշե (կ ե ռ թ ա):

Մրկ. (ա ք ց ա ն ը Թ ա փ ա ո ն ի կ ո ս ի բ ե ռ ա ն ը խ ո -
թ ե լ ո վ) Ա՛հ, թշվառ տղա... շատո՞նց ի վեր ե վոր կցավի:

Թաշի. Ա՛հ, ա՛հ...

Մրկ. Ինձի տված յուղեն քանի մը կաթիլ կաթեցուր
և ցավող ահուային դիր... Մնաք բարով... Ահա պարոն
ատամնաբուժ, ասիկա աճառնե ընդ աճառնալ յեղավ
(կ ե ռ թ ա):

Թաշի.—Ա՛հ... ուրկե եր, վոր դիմացս յելավ սա մար-
դը... ձեռներս, վոտներս կապեց (կ ա ն չ ե լ ո վ ծ ա ո ա ն)
Նիկո, Նիկո...

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԵՔ ԱՐԱՐՔՈՎ.

«Պաղտասար աղբարը» ևս հայ բուրժուական — մեղ-
չանական ընտանիքի քայքայման զավեշտական պատկերն
է տալիս, ինչպէս «Արեւելյան ատամնաբույժը»: Ապուշ,
պարզամիտ, և ինքնահավան Պաղտասար աղբարի կին
Անուշը և «հավատարիմ բարեկամ» Կիպարը տաւ տա-
րուց ի վեր սիրային կապեր ունին: Պաղտասարը պա-
տահմամբ իմանալով այդ՝ դատ Ե բանում անհավատարիմ
կնոջ դեմ և ապահարդան պահանջում: Սակայն «քաղա-
քակիրթ» Անուշը և «աչքաբաց» Կիպարն իրենց ստեղ-
ծած միջնայություններով այնպիսի ընթացք են տալիս
գործին, վոր Պաղտասարն ստիպւած է լինում «հաշտվել»
ղրության հետ՝ նյութական բավական զոհողություններ
կրելուց հետո:

Այդ զավեշտ — կատակերգության հերոսը — Պաղտա-
սարը հիշեցնում է Աբիսողոմ աղային («Մեծ. Մուրացկ.»),
նրա շարունակությունը ամուսնությունից հետո՝ թեթև
տարբերությամբ:

Պաղտասարի տիպարի չափ և նրանից ել ավելի
ցայտուն է ազգային մարմինների, ներկա դեպքում դա-
տաստանական խորհրդի պատկերը, վոր մեծ վարպետու-
թյամբ գծել է հեղինակը: Դա մի գեղեցիկ սատիրա յե,
ուր տաղանդավոր կերպով դրսևորված է ազգային գոր-
ծերի կապալառու բուրժուաների դատարկությունը, տգի-

տությունը, ինքնահավանությունը, քաջքուկները և այլն:
Պակաս վարպետորեն չի գծված նաև շահասեր, տգեա
և «լարախաղաց» փաստաբան Ոգսենի դեմքը:

«Պաղտասար աղբարից» բերում ենք հատկապէս այն
հատվածները, վորոնք վորոշ գաղափար են տալիս Պաղ-
տասարի, փաստաբան Ոգսենի և դատաստանական խոր-
հրդի անդամներին մասին: Հ. Հով.

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ.

ԱՐԱՐՔ ԱՌԱՋԻՆ

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՊԱՂՏԱՍԱՐ ՅԵՎ ՈԳՍԵՆ.

Ոգսեն.— Ինչպե՞ս յեղավ, վոր դուք այս կնոջ հետ
կարգվեցաք: Այս մասին տեղեկություններ կուզեմ առնել,
վորպեսզի խնդրոյն հիմը լավ ըմբռնեմ:

Պաղտ.— Յեղավ վոր գիշեր մը թատրոն գնացի բարե-
կամի մը հետ... վոտքս կոտրեր ու չերթայի... առաջին
արարվածին քովի ոթյակիս դռները բացվեցան և որիորդ
մ'ու պարոն մ'ը մտան հոն... բարով խերով չմտնեյին...
որիորդը տեսնելուն պէս հրապուրվեցա և կամաց-կամաց
հափշտակվեցա անոր գեղին, շարժվածքին, ձևերին, խո-
սելու և մանավանդ խնդալու յեղանակին, ուստի բարե-
կամիս հարցուցի, թե կը կանչնա՞ր այդ աղջիկն... բարով
խերով չհարցնեյի... բարեկամս պատասխանեց, թե կը
ճանչնար զինքն, թե վորը մ'եր, թե հեզ, բարեբարո, խո-
նարհ, խոհեմ, կըթված, դաստիարակված աղջիկ մ'եր:
Քանի մը որ յետքն ազգականներուս և քանի մը բարե-
կամներուս զիմեցի... բարով խերով չզիմեյի... և անոնց
կարծիքն իմանալ ուզեցի: Ամենքն ալ պատասխանեցին,
թե անգյուտ գանձ մը գտեր էյի և թե առանց ժամանակ



կորսնցնելու աշխատելի վայելել այդ գանձը: Այդ տեղեկութիւնաց վրա անմիջապէս խոս-կապ տվի, շաբաթ մը յետքը նշանավութիւն կատարեցի և յերեք որեն հետո հարսնիքը:

Ոգսեմ.—Ասանկ լավագույն հանձնարարութիւններ ունեցող կին մը ինչպե՞ս անբարոյականութեան մեջ կը գլորի ուրեմն:

Պաղտ.—Ի՞նչ փույթ ինձ, թե ինչպէս գլորած ե. յես կուգեմ միայն իմ տանս պատիֆն պահեմ, տունեսս վռնտեմ այդ լիբբ կիներն, զոր իբրեւ կողակից չեմ ընդունիր բնավ և կը պնդեմ նաև, վոր իր արժանի պատիժն կրէ:

Ոգսեմ.—Կը խնդրեմ, մի՛ հուզվիք այդքան. խնդիրը փափուկ ե. պող արյամբ խորհինք և տեսնենք, թե ինչ են որինաց տրամադրութիւններն այս մասին:

Պաղտ.—Ազգային հիվանդանոց դրկել, շղթայով կապել, անոթի պահել, ամեն գիշեր ծեծել, վոսկրները ջարդ ու բուրդ ընել և աշխարհես վերցնել ասանկ լիբբ և անպատիվ կիները:

Ոգսեմ.—Չափավորեցեք ձեր լեզուն: Առանց որինաց վճիռն ստանալուն իրավունք չունիք այդ կնոջ լիբբ և անպատիվ ըսելու: Ձեր տիկինն դեռ պարկեշտ ու պատվավոր կին մ'ե աշխարհի և որինաց առջև:

Պաղտ.—Պարկեշտ... պատվավոր... կին մը, վոր վատահամբավ տունե մը դուրս յեկած ե...

Ոգսեմ.—Այդ անպատիվ դուռն կոտրելով ու խորտակելով՞ ներս մտած ե, թե դուռը բաց գտնելով ներս մտած ե:

Պաղտ.—Ի՞նչուս պետք. բավական ե, վոր մտած ե հոն:

Ոգսեմ.—Ինձի պետք ե այս պարագան, կաղաչեմ վոր ըսեք:

Պաղտ.—Տեր վողորմյա. ի՞նչ գիտնամ յես... բայց դուռը կոտրելու և խորտակելու հարկ չկա:

Ոգսեմ.—Ապա ուրեմն բաց գտած ե դուռն ու ներս մտած ե. ահա նրբացուցիչ դեպք հանցանաց մը... տեսա՞ք...

Պաղտ.—Ի՞նչ կա... ո՞վ ե նրբացուցիչ դեպք հանցանաց մը...

Ոգսեմ.—Այսինքն դեպք մը, վոր հանցանքը կը նըրբացնե, կը բարակացնե...

Պաղտ.—Վերջը ի՞նչ կընեն այդ բարակ հանցանքը...

Ոգսեմ.—Բարակ հանցանքին պատիժն ալ բարակ կըլլա:

Պաղտ.—Ձեմ հասկնար բարակ հանցանքեն, հաստ հանցանքեն:

Ոգսեմ.—Փաստաբանական լեզվով նրբացուցիչ դեպք հանցանաց կըսվի:

Պաղտ.—Ուրեքս չբռնեց:

Ոգսեմ.—Գողիյերեն՝ սիրքոնդանս աթենյուանդ:

Պաղտ.—Ձեմ կընար ըմբռնել:

Ոգսեմ.—Իտալերեն՝ Ձիրքոսդանցա ադդենյուանդե:

Պաղտ.—Իտալերեն չեմ գիտեր:

Ոգսեմ.—Ալմաներեն՝ միլտերունս կըրունտ:

Պաղտ.—Ուրիշ կերպով մը հասկցուր:

Ոգսեմ.—Հունարեն՝ ելաֆրինթիբի բերիսդասիս:

Պաղտ.—Բերիսդասիսը գիտելի քիչ մը, շատ անգամ լսած եմ, բայց չեմ հիշեր, թե ինչ ըսել ե:

Ոգսեմ.—Անգղերեն՝ սիրքըմսդանս ադդենյուանթ:

Պաղտ.—Հայերեն հասկցուր սա անպիտանը:

Ոգսեմ.—Նրբացուցիչ դեպք հանցանաց, այսինքն հանգամանքներ, պարագաներ, վոր հանցանքը կը մեղմացնեն, կը պղտիկցնեն, մեղմացուցիչ պարագաներ կամ լավ ևս պատճառներ, զորս հանցավորը կը վնասուե, պատիժը թեթեւանելու պղտիկցնելու համար:

Պաղտ.—Սանկ չըսե՞ս, հասկցա:

Ոգսեն.—Թե վոր տիկինն դուռն կոտրելով ներս մը-
տած ըլլար, պատիժն ավելի ծանր կըլլար:

Պաղտ.—Կիմանամ: Բայց վերջապէս մտած ե այդ
անխիճյալ տունը մեկը սիրելու համար:

Ոգսեն.—Մասնավորապէս սիրելու դիտմամբ մտած
ե հոն, թե դիպվածով սիրած ե:

Պաղտ.—Ասոնք իմ տանս պատվուն հետ վերաբերու-
թյուն չունին:

Ոգսեն.—Սիրականն պատանի՞ յե թե չափահաս:

Պաղտ.—Կրողը տանի, ո՞վ գիտե:

Ոգսեն.—Գեղեցիկ ե թե տգեղ:

Պաղտ.—Կը խնդրեմ, վերջացուը այս հարցումները:

Ոգսեն.—Բարի՞ նպատակով սիրած ե, թե չար:

Պաղտ.—Ի՞նչպէս կրնա կին մը բարի նպատակով
խաբել, մատնել յուր երիկն: Ի՞նչ խայտառակություն ե
աս... յես հերը կանխեմ այդ նրբացուցիչ դեպք հանցա-
նացին ալ, հնարողին ալ... իմ կինս, իմ ընկերս, իմ կո-
ղակիցս, իմ լծակիցս ինձմե զատ ուրիշ անձ մը սիրած
ե, յեղեռն, վոճիր գործած ե, կախովելու արժանի յե...

Ոգսեն.—Շատ կաճապարեք վճիռ տալու. համբերեցեք,
վոր որենքն խուզարկե, հետազոտե, քննե, սերտե և
ուսումնասիրե այն պատճառներն, վոր ստիպած են կինդ
սիրական մ' ունենալու: Թերևս իրավունքներ ունի ուրիշ
մը սիրելու... Դուք կուզեք, վոր ձեր վկայութեան վրա
անմիջապէս պատժվի ձեր տիկինը: Կարելի չե այդ: Շա-
տեր ձեզի պէս իրենք զիրենք անմեղ կարծելով դատ վա-
րած են իրենց կնոջ դեմ և ինքյանք հանցավոր և պար-
տավոր յելած են դատարանն:

Պաղտ.—Հաճանականություն կա՞, վոր յես ալ հան-
ցավոր ըլլամ այս խնդրուն մեջ:

Ոգսեն.—Ամեն բան հավանական ե:

Պաղտ.—Ըսել ե, թե այդ կինն կարելի չե այսոր
Փրկիչ դնել:

Ոգսեն.—Անհնար ե: Նրբացուցիչ դեպք հանցանաց
այնչափ առաջ գնացած ե, վոր յեթե կինդ բարի նպա-
տակով մը սիրած ե ուրիշ մը, այսինքն ի նպատակ
զային առաջադիմութեան և լուսավորութեան, կամ հոգուտ
վորբեր, հաշմանդամներ, ծերեր, անկարներ, աղքատներ ու
տնանկներ պատասպարելու գովելի և ազդողուտ ձեռնարկի
մը, կինդ, կսեմ, լրագրաց մեջ կանցնի, գովեստներ, դա-
վինյա պսակներ կընդունի, վորովհետեւ մասնավորին շահն
ընդհանուրի շահուն զոհելու դյուցագնությունն ունեցած
ե. և այս պարագային մեջ...

Պաղտ.—Յես եմ ուրեմն հանցավորն:

Ոգսեն.—Իսկ ընդհակառակն, յեթե սիրեր տգեղ կամ
ծեր հակակիր անձ մը, բնականաբար կը ծանրացներ հան-
ցանքը. թողունք որենքն, հասարակաց կարծիքն կը դա-
տապարտեր զինքն ըսելով. «Գոնե սիրածն գեղեցիկ յե-
րիտասարդ կամ համակիր մեկն ըլլար:

Պաղտ.—Վաղը կընա՞նք Փրկիչ դնել:

Ոգսեն.—Անկարելի յե: Իսկ յեթե դուք ձեր կնոջն
անհավատարիմ գտնվելով, կամ նախանձելով, կամ հետն
խստութեամբ վարվելով պատճառ տված եք իրեն սիրական
մ' ունենալու, այդ պարագային մեջ մեծ պատասխանա-
տվություն կը հրավիրեք ձեր վրա:

Պաղտ.—Խենդի պէս կը սիրեյի զինքն:

Ոգսեն.—Վստահ յեղեք ուրեմն: Ժամանակը սուղ ե. պի-
տի վոր յերթամ: Պիտի աշխատիմ իրավաբանական և փաս-
տաբանական բոլոր կարողութեամբս այդ դատին մեջ գծեզ
անմեղ հանդիսացնելու և ձեր կինն հանցավոր շինելու:

Պաղտ.—Նրբացուցիչ դեպք հանցանացին շատ կարե-
վորություն մի՞ տար:

Ոգսեն.—Իմ պարտքս պիտի ըլլա գորավոր և հաստ
փաստերով ջախջախել նրբացուցիչ դեպքերը:

Պաղտ.—Շնորհակալ եմ:

Ոգսեն.—Ի տեսություն (կերթա):

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՊԱՆՏՈՍՏՈՐ.

Պաղոս.—Յերթաս բարով, նրբացուցիչ փաստաբան... քիչ մնաց, վոր հանցավոր ըներ զիս մեր մեծապատիվ իրավագետը: Յեթե թույլբերան ու ապուշ մարդ մ'ըլլայի, տարակույս չկար, վոր հանցանքն վրաս ծանրացնել պիտի ուզեր և բուն հանցավորն արդարացնել պիտի աշխատեր: Անառակ կինն մաքուր աղամբի պիտի դառնար, վորովհետեւ նրբացուցիչ դեպք հանցանաց ունի յեղեր, վորովհետեւ այս նրբացուցիչն գաղղիյերեն, իտալերեն, հունարեն, արմաներեն ու անգղյերեն ալ ունի յեղեր, վորովհետեւ սիրելու դիտավորությամբ սիրած չե յեղեր, այլ դիպվածով սիրած ե յեղեր, վորովհետեւ սիրածը ծեր ու տգեղ չե յեղեր, վորովհետեւ չար նպատակով սիրած չե յեղեր, այլ բարի նպատակով սիրած ե յեղեր, վորովհետեւ... ի՞նչ գիտնամ, այս վորովհետեւներն այդ լիբբին, այդ անհավատարիմ կնոջ, այդ դժոխային եյակին անմեղությունն կապացուցանեն յեղեր: Խեղճիդ պտուկը սիրեմ, տե՛ր փաստաբան. մենք ալ կը հասկնանք քիչ մը փաստաբանությունեն. մենք ալ քեզի չափ «Ձեն հոգևոր» խառնած ենք ժամանակին. անանկ նրբացուցիչ բաներ կ'լլողներեն չենք: Վողորմած հոգի հայրս ալ ասանկ եր. շատերը կերթային իրմե խելք սորվելու. մեծ հայրս ալ խելացի յեր. մենք ցեղով ասանկ ենք, բնականեն փաստաբան ենք և անմիջապես կը հասկնանք, թե վորուքովն ե իրավունքը:

Տ Ե Ս Ի Լ Թ.

ԱՆՈՒՅՇ, ԿԻՊՍԻ ՅԵՎ ՈԳՍԵՆ

Ոգսեն.—Շատ հանդգնություն ցույց կուտաք, տիկին, ձեր անդորրության խանգարման պատճառ յեղող անձն

ձեր քովն պահելով նույն խակ այն վայրկենին, ուր անհավատարմության հանցանքով ամբաստանված դատարան ներկայանալու կոչնագիր պիտի ընդունիք: Փոխանակ արդարանալու միջոցներ փնտռելու ձեր գործած վտճիռն հաստատելու ապացույցներ կ'որոնեք: Մեծ հանդգնություն...

Կիպար.—Արդարանալու պետք չունի, վորովհետեւ հանցանք չունի...

Ոգսեն.—Յե՛վ դուք ընտանիք մը փչացնելու աշխատելեն ու հաշողելեն յետքը տակավին կը համարձակի՞ք ձեր լրբությունն առաջ տանելու:

Կիպար.—Շատ առաջ կ'երթաք:

Ոգսեն.—Ընդհակառակն յետ կը մնամ. դուք իրմե շատ ավելի հանցավոր եք, վորովհետեւ դո՛ւք գայթակեցուցեր եք զինքն, հեռաբար իրմե շատ ավելի ծանր պատժո պիտի դատապարտվիք:

Կիպար.—(Խնդալով) կը խնդրեմ, գթացեք քիչ մը, տե՛ր փաստաբան:

Ոգսեն.—Կը ծաղրե՞ս... դո՛ւ միայն պիտի պատժվիս, և պիտի աշխատիմ, վոր տիկինն բնավ հանցանք չունենա. այնպիսի դարձվածք մը պիտի տամ դատավարության, վոր բոլոր հանցանքը քու վրա ծանրանա և տասը տարի բանտարկության դատապարտվիս:

Կիպար.—Մեղք եմ, (խնդալով) չորս տարվան դատապարտել տվեք:

Ոգսեն.—Դուրս հրամմե՛ և մենակ թող զիս պաշտպանյալիս կնոջը հետ:

Կիպար.—Վո՛չ:

Ոգսեն.—Պաշտպանյալիս կինն իմ կինս ըսել ե, դո՛ւրս յելիք:

Կիպար.—Իմ հոգիս ե այն... կը նախանձիմ:

Ոգսեն.—Ձեր խոստովանության հարկ չկա, արդեն ապացուցված և հաստատված ե այն: Դուրս յելի՛ր, և մի՛ ստիպեր զիս խիստ միջոցներու դիմել:

Կիսկար.—Վոչ:

Անուշ.—Կը խնդրեմ, մի՛ կռվիք ինձի համար:

Ոգսեմ.—Հարկ անհրաժեշտ է, վոր դուքս յեղնե ան-
պատճառ. փաստաբանական պարտքս կը պահանջե, վոր քիչ
մ'առանձին մնամ ձեզի հետ:

Կիսկար.—Իմ պատիվս ալ կը պահանջե, վոր բնավ
առանձին չմնաք անոր հետ:

Ոգսեմ.—Ի՞նչ կը նշանակե այս ընդդիմությունը...

Տ Ե Ս Ի Լ Ժ.

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՊԱՂՏԱՍՍԱՐ

Պաղտասար.—Ի՞նչ է... ի՞նչ կա...

Ոգսեմ.—Այո՛, առանձին տեսակցություն մ'անհրա-
ժեշտ պետք է:

Կիսկար.—Առանձին տեսակցություն մը բնավ հար-
կավոր չէ:

Պաղտ.—(Ա. Ո. Կիսկար) Անիկա փաստաբան է, խիստ
մի՛ խոսիք հետը:

Կիսկար.—(Հրեւոյ Պաղտասարը) Դուն մի՛ խառ-
նվիր. խնդիրը ուրիշ կերպարանք առած է:

Ոգսեմ.—Փոխանորդիս կինն է. ինչո՞ւ թույլ չես տար,
վոր հետը խոսիմ յերկու վայրկյան:

Պաղտ.—(Ա. Ո. Ոգսեմ) Ան ա՛լ բարեկամ է, մի՛ վըշ-
տացներ:

Ոգսեմ.—(Հրեւոյ Պաղտասարը) Խնդիրը քեզմե
յեւած է. դուն մի՛ խառնվիր մեր գործին: (Ա. Ո. Կիսկար)
(Դուքս պիտի յեղնիք, յեթե վոչ...)

Պաղտ.—(Ա. Ո. Կիսկար) Քիչ մը դուքս յեղիր, նայինք,
ի՞նչ պիտի ընե...

Կիսկար.—(Հրեւոյ Պաղտասարը) Դուքս պիտի
չեղնեմ բնավ և կը հրամայեմ, վոր դուն դուքս յեղես...

Ոգսեմ.—Հիմա իմաց կուտամ առ վոր անկ է...

Կիսկար.—Յերթաս բարով:

Ոգսեմ.—Ի պարտ ու պատշաճ տնորենություն:

Կիսկար.—Կոնակդ տեսնեմ:

Ոգսեմ.—Հտեաբար և բնականաբար հետեանքն չկըր-
նար նպաստավոր ըլլալ քեզի համար:

Կիսկար.—Բարեկամիս կինն առանձին ձգելու յեմ յե-
ղեր մեր մեծապատիվ փաստաբանին հետ:

Ոգսեմ.—Իմ նպատակս բարի յե... (Ա. Ո. Պաղտա-
սար, վոր ուժով կը քաշեր թեւեն) Գնա՛ սրկե,
դուն ի՞նչ քիթդ կը խոթես այս խնդրույն մեջ, թո՛ղ տուր
վոր խոսիմ:

Կիսկար.—Թող տուք, վոր փաստաբանե, փաստաբա-
նական պարտքը կը պահանջե յեղեր, վոր առանձին տե-
սակցություն մ'ունենա յեղեր պաշտպանյալին կնոջ հետ:
(Ա. Ո. Պաղտասար, վոր ձեռքով Կիսկարին բե-
րանը գոցել կուզեր) Դուն ի՞նչ կը խառնվիս մեր
գործին, մենք կը կռվինք, կը կռվինք, կը հաշտվինք... քե-
զի ի՞նչ մենք կը կռվինք, կը հաշտվինք, քեզի բան մ'ըսող
կա՞. գնա՛ հանգիստդ նայե:

Պաղտ.—Թող չեն տար, վոր խոսիմ... հիմա պիտի
ձաթիմ...

Ոգսեմ.—(Ա. Ո. պաղտասար) Դատդ ինձի չհանձ-
նեցի՞ր...

Պաղտ.—Այո՛:

Ոգսեմ.—Կի՞նդ:

Պաղտ.—Այո՛:

Ոգսեմ.—Բանդ գնա ուրեմն և մի՛ խառնվիր փոխա-
նորդիդ գործերուն:

Պաղտ.—Բայց... (Ան ուլլ և Կիսկար կմեկնին):

Ոգսեմ.—Շա՛տ լավ, բայց գիտցիր, վոր չարաչար
պիտի պատժվիս, պ. Կիսկար (դունեն պոռալով)
տասներկու տարի բանտարկություն պիտի քաշես և հետո...
հետո... ան ալ վերջը կը խորհինք:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա .

ՊԱՂՏԱՍՍՐ ՅԵՎ ՈԳՍԵՆ

Պաղտ.—Վազելով հեալով յեկա լսելու համար կարևոր հայտնություններն, զոր ունիք յեղեր ինձի ընելու, կռիվեն գլուխ չվերուցիք վոր...

Ոգսեն.—Անպիտան քեզի, կեցիւր դուն, կը սորվեցնեմ քեզի փաստաբանի մը հետ վարվելու յեղանակը:

Պաղտ.—Սա կարևոր հայտնություններն:

Ոգսեն.—Անդգամ քեզի, ինձի հետ առանձին չե՞ս ձգեր Անուշը... մի՛ ձգեր, վերջը կը տեսնես:

Պաղտ.—Պիտի ըսե՞ք սա կարևոր հայտնություններն...

Ոգսեն.—(Դեպի դուռը դառնալով) Լիրբ, յես պատվովոր մարդ եմ. քեզի հետ խոսելու իսկ չեյի զիջաներ... (մեկեն ի մեկ դուռը վազելով և պոռալով) Սրիկա՛, ո՞վ կարծեցիր դուն ինձի, վոր թող չավիր քիչ մը տեսակցիլ Խիկին Անուշի հետ. քեզի պես անպատի՞վ կարծեցիր. քեզի պես, վոր մտերիմ բարեկամիդ կնոջը հետ գաղտնի հարաբերություններ կը հաստատես, խեղճ կինը կը գայթակղեցնես, կը մոլորեցնես, հետը ուրիշին տունը կերթաս և ժամերով կխմես, կ'երգե՛ս, կը պարես...

Պաղտ.—Բարկությունը չանցավ, վոր սա կարևոր հայտնություններն իմանայինք:

Ոգսեն.—Յեթե իշխանություն ունենայի, շղթաներու տակ կ'ոչնչացնեյի ձեզի պես յերիտասարդները: Ի՞նչ պատիվ կրնա ունենալ քեզի պես արարած մը, վոր տասը տարեյե ի վեր մտերիմ բարեկամիդ, Պաղտասարին կինը կը սիրես, տասը տարեյե ի վեր:

Պաղտ.—Պաղտասարի՞ն... Ի՞նչ կ'լսեմ... տասը տարեյե ի վեր...

Ոգսեն.—Ապուշին մեկը գտեր ես և ուզածիդ պես խաղացեր ես, նենգավոր:

Պաղտ.—Ուրիշ Պաղտասար ե... մեկեն ի մեկ կարծեցի, թե յես եմ ու...

Ոգսեն.—Յեթե յես ըլլայի Պաղտասար աղբարին տեղ, զքեզ բզիկ բզիկ կընեյի...

Պաղտ.—Պաղտասար աղբար ըսավ... չեմ հասկնար...

Ոգսեն.—Ինքնիրմե անցած ու ցնդած մարդ մը խաբելը դժվար չե. յեկուր զի՛ս խաբե, թշվառական, չվառական:

Պաղտ.—Սա Պաղտասար աղբարն ո՞վ ե արդյոք... ի՞նչ ավանակ մարդ ե յեղեր...

Ոգսեն.—Յեվ սակայն որինաց ամենեն խիստ տրամադրությանց համաձայն դատապարտել պիտի տամ զքեզ իբրև վոճրագործ և պիտի ջանամ փրկել տիկին Անուշը...

Պաղտ.—(Պոռալով) Հերիք, պարո՛ն փաստաբան, հերիք, մոտ յեկուր, վոր զիրար հասկնանք... սա կարևոր հայտնություններն զրուցե ինձ:

Ոգսեն.—Հայտնություններ մնա՞ց անելու... ամեն բան հայտնվեցավ արդեն, կնկանդ սիրականը Կիպարն ե...

Պաղտ.—Կիպա՞ր ըսիր:

Ոգսեն.—Այո՛, Կիպար: Սակայն հանդարտե. անոր քթեն բերնեն պիտի հանեմ բոլոր ըրածները: Ոն, ուրեմն գործի սկսենք: Նախ և առաջ իմ ապառնի աշխատությանցս փոխարեն հատուցանելի վարձուց քանակությունն վորոշենք: Մենք փաստաբաններս սովորություն ունինք յերեք վճարտումով ընդունել մեր վարձքը...

Պաղտ.—Կիպա՞րն ե ըսիք:

Ոգսեն.—Հետեաբար պարտավոր եք նախ հիսուն վոսկի վճարել, հետո միջոցին հիսուն վոսկի և յետքը կատարածին հիսուն վոսկի: Ամբողջ գումար՝ հարյուր հիսուն վոսկի: Կը հուսամ, վոր դուք անմեղ պիտի յեկնեք դատարանեն և ձեր հակառակորդը պիտի կրե արժանավայել պատիժն. իսկ յեթե բոլոր ջանքերուս հակառակ չկարենանք մեր հուսացած արդյունքն ձեռք բերել, այն ատեն ալ իրավունք պիտի ունենամ իմ հարյուր հիսուն վոսկի

գումարն պահանջելու, ըստ վորում աշխատությունս միշտ աշխատություն ե:

Պաղտ.— Սխալ չհասկընամ, կարծեմ Կիպար ըսիք, այնպես չէ:

Ոգսեն.— Այ, կեն ինի կի, պե այբ բե պար, Կիպար...

Պաղտ.— Այ թշվառական, վորո՞ւ մտքեն կանցներ... ու տասը տարիքի ի վե՞ր կը սիրե յեղեր...

Ոգսեն.— Այո՛:

Պաղտ.— Ո՞վ կը հավատար:

Ոգսեն.— Ի՞նչ պիտի պատասխանեք առաջարկությանս:

Պաղտ.— Ի՞նչ պատասխանեմ... ապրիս, Կիպար, ապրիս:

Ոգսեն.— Հարյուր հիսուն վոսկի մեծ գումար մը չե անհավատարիմ և վատ կնիկե մը բաժնվելու համար:

Պաղտ.— Այդ գումարով յերեք կին կառնվի, յեղբայր:

Ոգսեն.— Իրավունք ունիք, կին մարձակելն ավելի սուղ ե, քան առնելը:

Պաղտ.— Գոնե վստահ եք, թե պիտի շահինք դատը:

Ոգսեն.— Շատ վստահ եմ. նրբացուցիչ դեպք հանցանաց չունին բնավ:

Պաղտ.— Լավ, բավական ե, վոր բաժնվիմ սա սատանա կնիկեն:

Ոգսեն.— Աճապարեցեք ուրեմն առաջին վճարումն ընելու, վորպեսզի նախնական գործողություններն ավարտենք: Ինչպես գիտեք, այս գործողություններն քիչ մը յերկար են. աղերսագիրը նախ նախագահին կ'ամտուցվի, վոր նախաձեռնության ատյան կ'հղե. նախաձեռնության ատյանը ձեռնհասության ատյանը կ'հղե. ձեռնհասության ատյանը հարաբերության դիվանը կ'հղե. հարաբերության դիվանը խմբագրության դիվանը կ'հղե. խմբագրության դիվանն իրավասության դիվանը կ'հղե. իրավասության դիվանը տնտեսական դիվանին, տնտեսական դիվանն ուսում-

նական դիվանին, վորմե կերթա դատաստանական խորհրդո, վոր խնդիրն քննելու համար հանձնաժողով մը կը կազմե. այս հանձնաժողովն ալ խնդիրն ուսումնասիրելու համար մասնաժողով մը կը կազմե, վոր մասնախումբ մը կը կազմե խնդիրը մանրամասնորեն սերտելու և տեղեկագրելու համար, այս մասնախումբն ալ ոժանդակ մասնախումբ մը կընտրե, վորպեսզի իրեն ոգնե. այս ոժանդակ մասնախումբն ալ յուր ճյուղերը կուենա խնդիրն յուր բոլոր ճյուղերովն քննելու համար, և այս ճյուղերուն յուրաքանչյուրն ալ մեյ մեկ մասնաճյուղեր կուենա, վորք խնդիրն յուր մասնաճյուղերովը քննելեն վերջը կ'հանձնեն իրենց ճյուղին, ճյուղն ոժանդակ մասնախումբին, ոժանդակ մասնախումբն մասնախումբին, մասնախումբն մասնաժողովին և այսպես խնդիրը կերթա հոն, ուրկից ճամբա յելած եր, հետո նորեն կուգա դատաստանական խորհրդո, ուր կը կատարվի դատավարությունը*): Յերթանք...

Պաղտ.— Աս ի՞նչ յերկար ճամբորդություն ե:

Ա Ր Ս Ր Ք Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ.

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՊԱՂՏԱՍԱՐ, հետո Դատաստանական Խորհրդո անդամներ—
ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱԹ և ՍՈՒՐ.

Փաղաղ.— (Ա. ո յ Ե Ր Կ ա թ) Մտեք կաղաչեմ:

Յերկաթ.— (Ա. ո Ս ու Ր) Կը խնդրեմ, անցեք:

Սուր.— (Ա. ո Փ ա յ Լ ա կ) Առաջ դո՛ւք մտեք:

Փաղաղ.— Ինձի չվայելեր ձեզմե առաջ մտնել:

Սուր.— Ձեր ազնիվ զգացումներն են, վոր այդպես խորհիլ կուտան ձեզ:

*) Բյուրոկրատիզմի «իդյալական» նմուշ: Հ. Հով.

Փայրակ.—Ձեր առ իս ունեցած համակրությունն ե, վոր այդպէս խոսիլ կուտա ձեզ:

Յերկար.—(Առ Սուր) Ժամանակ չանցունենք, մտքը, կաղաչեմ:

Սուր.—Դո՛ւք մտքը:

Յերկար.—Վո՛չ, թող տեր Սուրը մտնէ:

Սուր.—Վո՛չ, թող տեր Փայլակը մտնէ:

Փայրակ.—Վոչ, յես կարգս գիտեմ:

Սուր.—Յերեքնիս մեկէն մտնենք, ո՛ն (յերեքը մեկէն կը մտնեն):

Փայրակ.—Նստելու համար ալ ժամանակ չանցունենք, կաղաչեմ:

Սուր.—(Առ Պաղտասար) Նախնական գործողություններ ունինք կատարելու, կրնաք դուրսը սպասել քիչ մը և ներս մտնել, յերբ զանգակին ձայնը լսեք: (Պաղտասար կը մեկնի):

Փայրակ.—(Առ Սուր) Դուք չըսիք ձեր կարծիքը:

Սուր.—Վո՛չ, վորովհետեւ վիճաբանությունն ընդմիջելու ստիպւեցանք:

Յերկար.—Յես կուսակցական վոգով չեմ շարժիր:

Փայրակ.—Վոչ ալ յես: Սակայն դուք այնպիսի ակնարկություններ ըրիք, վոր արժանապատուություն վիրավորելու բնություն ունեյին, հասկցնել կուզեյիք ինձ, թե կուրզկուրայն կը պաշտպանեմ այն կողմը:

Յերկար.—Ամենեին, շատ սխալ ըմբռնած եք իմ խոսքերուս իմաստը: Յես ըսի պարզապէս, թե ձերմակ գինին խնձորով կխմվի, մինչդեռ սեւ դեղձով ախորժելի յե քմաց:

Փայրակ.—Յե՛վ ավելցուցիք, թե սե գինիով խնձոր ուտողներն ճաշակե զուրկ են:

Սուր.—Ըստ իս ճաշակի խնդրո մեջ ճշմարտությունն միշտ ծակամուտ կը պահվըտի, հետեաբար յերկու կողմն ալ կրնա իրավունք ունենալ: (Սոդոմէ — աղախինը խահվե կհրամցընէ):

Փայրակ.—Իրավունք ունեյի ուրեմն, յերբ կպոռայի, թե ճաշակի խնդրոց մեջ վճիռ արձակելն տղայություն ե:

Յերկար.—Վոչ, յես կպնդեմ միշտ, թե դեղձով ձերմակ գինի չի խմվիր: Ըստ ձեր քմաց ուրիշի քիմքը դատելու իշխանություն չունեյիք:

Պաղտասար.—(Դռան առջև) Կարծեմ զանգակի ձայն մը...

Սուր.—Վո՛չ, նախնական գործողություններն չավարտեցան տակավին (Պաղտասար կմեկնի):

Փայրակ.—Վոչ ալ պարտավոր եյի իմ քիմքս ձեր քմաց համաձայնեցնել:

Յերկար.—Անտարակույս. վորչափ քիմք, այնչափ գինի:

Փայրակ.—Վորչափ խնձոր, այնչափ քիմք:

Յերկար.—Բայց մեծամասնությունը...

Փայրակ.—Մեծամասնությունն իմ քովս ե:

Յերկար.—Վո՛չ:

Փայրակ.—Այո՛:

Սուր.—Կաղաչեմ, փակեցեք այս խնդիրն:

Յերկար.—Ո՛ւր լսված ե յեղբայր, ձերմակ գինիով դեղձ ուտելը:

Պաղտասար.—(Դռան առջև) Մտնե՛նք:

Փայրակ.—(Վոտք յելնելով) Ինչո՞ւ կաճապարեք. ազգը մեզի ամսական չտար ձեր գործերը կարգադրելու համար. մենք ազգասիրաբար, անձնանվիրաբար հանձն առած ենք հոս զալու և ձեր խնդիրը քննելու: Մենք գործի տեր մարդիկ ենք, մենք զավակներ ունինք, վորոնց ապրուստ և հագուստ հոգալու պարտավոր ենք. և այսոր մեր գործերն յերեսի վրա թողով յեկած ենք հոս ձեր ամուսնական խնդիրը քննելու. մենք ձեր ծառան չենք, հասկցա՞ք. մենք ձեր գերին չենք, հասկցա՞ք. մենք ձեր ստրուկը չենք, հասկցա՞ք. դուք պարտավոր եք մեզի յերախտագետ ըլլալ, սակայն մենք ձեր յերախտագիտու-

Թյունն ալ չենք ուզեր, այլ կփափագինք միայն, վոր ազատ Թողուք զմեզ գործելու. համբերեցեք ուրեմն, վոր լննենք ատենական գործողություններն և ներս կանչենք զձեզ: (Պաղտատար կմեկնի): Յես ձերմակ գինի կխմեմ, յեղբայր, որենքը կզատապարտե՞ ձերմակ գինի խմողներն:

Յերկար.—Ինչո՞ւ զատապարտե, սիրելիս:

Փայրակ.—Ինչ կուզես ուրեմն:

Սուր.—Վերջացուցե՛ք: Ատյանը բացված է: (Գլը պանեն Թուղթեր հանելով): Մեր գրասեղանին վրա յերեք Թուղթ կա: Առաջինն տեր Կիպարի կողմեն տրված է: Յերկրորդն ստորագրված է տիկին Անուշեն: Յերրորդն է տեր Պաղտատարին Թուղթը: Ըստ իս առաջնություն տալու յե տիկին Անուշին խնդրագրույն, վոր Թեև յերկրորդն է Թվականի կարգով, այլ առաջինն է ստիպողականության կարգով, ըստ վորում մահու և կենաց խնդիր է: (Սողոմե անուշ կբերե):

Յերկար.—Այո՛, շատ աղեկ ամփոփեցիք խնդիրները:

Փայրակ.—Ամփոփում մը, վոր ամեն ինչ մանրամասնորեն կպատմե. համառոտ ընդարձակություն մը...

Սուր.—(Զանգակը հնչեցնելով) Տեր Պաղտատար և տիկին Անուշ ներս գան:

Տ Ե Ս Ի Լ Ը.

ՊԱՂՏԱՍԱՐ, ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱՐ, ՍՈՒՐ, ԿԻՊԱՐ.

Սուր.—(Զանգակը հնչեցնելով) Ատյանը բացված է. խոսքը ձերն է, տեր Կիպար:

Կիպար.—Տեր Պաղտատար այնպիսի զրույցներ տարածեր է հրապարակի վրա, վորք պատիվս արատավորելու և զիս մարդկային ընկերությանց մեջ մտնելու անարժան եյակ մը ցույց տալու հանգամանքն ունին:

Կինդրեմ, հարցնելիք տեր Պաղտատարին, Թե յե՞րբ ըսած եմ իրեն, Թե յուր կինն կսիրեմ:

Սուր.—Խոսքը ձերն է, տե՛ր Պաղտատար:

Պաղտատար.—Ի՞նքը պիտի ըսեր, Թե կսիրե կինս:

Սուր.—Կի՞նդ ըսավ:

Պաղտատար.—Վո՛չ:

Սուր.—Ո՞վ ըսավ ուրեմն:

Պաղտատար.—Վատահամբավ տան մը մեջ զիրար սիրելն հաստատեցինք:

Սուր.—Վկաներ ունի՞ք: Ո՞վ տեսած է անոնց զիրար սիրելը:

Պաղտատար.—Ով տեսած է:

Սուր.—Այո՛:

Պաղտատար.—Վատահամբավ տան մը մեջ...

Սուր.—Վատահամբավն բավական չէ. գորավոր ապացույցներ պետք է հաստատելու համար տեր Կիպարի հանցանքն, և մենք համոզվելու յենք, վորպեսզի ըստ այնմ վորոշենք տնորինվելիք պատիժը:

Կիպար.—Կինդրեմ, վոր պահպանեք պատիվս և մաքրեք զիս սարսափելի արատե մը: Ինքը աւրիշ կնոջ հետ կարգվելու համար ազատ է զրպարտել յուր կինն իբրև անհավատարիմ, և կինն ալ կարող է ինքզինքն պաշտպանել. բայց չեմ ընդունիր, վոր ասանկ զրպարտության մը գործիք ըլլամ: Հատուցում կպահանջեմ: Գոնե յերեք հարյուր վոսկի տալու յե ինձ, վոր սրբվիմ այս արատեն:

Սուր.—Ի՞նչ պիտի պատասխանեք:

Պաղտատար.—Վատահամբավ տան մը մեջ ի՞նչ գործ ուներ կնոջս հետ:

Կիպար.—Աս ալ զրպարտություն մ'է:

Սուր.—Կամ հաստատել պետք է ինչ վոր կըսեք, կամ գոհացնել տեր Կիպարը:

Պաղտատար.—Լուծա մը չեմ կարող տալ:

48581

Կիպար.—Ուրեմն յետ առեք ձեր խոսքը և ներուժն խնդրեցեք:

Պաղսասար.—Վո՛չ:

Կիպար.—Գիտնալ պետք է սակայն, թե այլոց պատիժն ձեր խաղալիքը չէ:

Պաղսասար.—Վոչ ալ իմա այլոց:

Յերկաթ.—Պարապ խոսքերով ժամանակ մի՛ անցունեք. մենք ալ գործ ունինք. պիտի յերթանք, մենք ամսականով չենք. մեր տղաքներն հաց կուզեն իրիկվան:

Փայրակ.—Այո՛, Այո՛, շուտ մը հաշտվեցեք, լմնա յերթա:

Կիպար.—Պատիվ կպահանջեմ:

Պաղսասար.—Պատիժն յե՛ս կպահանջեմ:

Փայրակ.—Դուն անոր ճակտեն համբուրե, ան ալ քու ձեռքդ պագնե, գործը չերկարի:

Յերկաթ.—Կիպար անանկ տղա չե... յես զինքը պղծ տիկուց կճանչնամ, հայրն ալ ազնիվ մարդ մ'է, Դերենիկ կըսեն:

Փայրակ.—Ի՞նչ կըսես, Դերենիկին տղա՞ն է:

Յերկաթ.—Այո՛:

Փայրակ.—Կճանչնամ, ազնիվ ընտանիք. մայրն ալ ազնվական տոհմե սերած է... Ի՞նչ կընես հայրդ, աղե՞կ է:

Կիպար.—Աղեկ է, յուր հարգանքները կմատուցանե:

Փայրակ.—Ի՞նչ ըրավ ձին:

Կիպար.—Կպահե:

Փայրակ.—(Ա. յ. Ե. Կ. Կ. Կ.) Ձի մ'ունի, վոր տեսնելու արժանի բան է. սքանչելի ձի մը, գեղեցիկ ձի մը, վոր շոգեկառքի հետ կընա մրցիլ: (Ա. Կ. Կ. Կ.) Քանի՞ տարեկան է հիմա այդ ձին:

Կիպար.—Ութը լմնցուց, իննը պիտի մտնա:

Փայրակ.—Քալած ժամանակը կցատկե՞ միշտ:

Կիպար.—Այո՛:

Փայրակ.—Անոր վրա կայնին քիչ մը դժվար է. բայց հորդ համար աշխարհիս ամենեն դյուրին բանն է: Շիտակը յես կվախնամ: (Ա. յ. Ս. յ. Ս. յ. Ս.) Ցատկած ժամանակը տասը կանգուն վեր կբարձրանա և քսան կանգուն անդին կնետե ինքը զինքը: Շատ աղեկ ձի մ'է: (Ա. Կ. Կ. Կ. Կ.) Քանի՞ առած է այդ ձին:

Կիպար.—Քսան և հինգ վոսկիի:

Փայրակ.—Բայց այսոր յեթե ծախելու հանե, կարծեմ քառասուն վոսկի կուտան: Տեր Պաղտասար, տեսա՞ծ եք այդ ձին:

Պաղսասար.—Տեսած եմ. (մ. Կ. յ. յ. յ.) այդ սատկելիք ձիուն խոսքն ո՞վ հանեց:

Փայրակ.—Ինչպե՞ս է:

Պաղսասար.—Աղեկ է (մ. Կ. յ. յ. յ.) սատանան տանի:

Փայրակ.—Այդ ձիով նապաստակ վորսալու յերթալու յէ: (Ա. յ. Պ. յ. Պ. յ. Պ. յ. Պ.) Նապաստակ կերած ունի՞ք:

Պաղսասար.—Վոչ:

Փայրակ.—(Ա. յ. յ. Ե. Կ. Կ.) Կըսեն, թե միտը քիչ մը թթու յէ:

Յերկաթ.—Այո, անհամ է, բայց յեթե լավ մը համեմվի՞ կուտվի:

Սուր.—Յես բնավ կերած չունիմ: Դուք կերած ունի՞ք տեր Յերկաթ:

Յերկաթ.—Վո՛չ, քանի մ'անգամ լորամարզի կերած եմ:

Կիպար.—Ատոր միտը պատվական է:

Փայրակ.—Յեփեղուն վրա յէ գործը:

Սուր.—Բնականաբար յեթե խնամով պատրաստվի...

Յերկաթ.—(Ա. յ. Պ. յ. Պ. յ. Պ.) Ժամավաճառ չըլանք, Ի՞նչ պիտի պատասխանեք. պիտի համառի՞ք ձեր պահանջոց մեջ, թե պիտի հաճիք հաշտությամբ վերջացնել այս խնդիրն:

Կիպար.—Յես յուր անձնականին հետ բան չունիմ:

կհարգեմ զինքն իբրև բարի և պատվավոր մարդ, այսու-
ամենայնիվ կպահանջեմ, վոր խնդիրն ըստ որինի քննվի
և իր լուծումն ստանա:

Սուր.—Տեր Պաղտասարն ալ բարի մարդ է. ան ալ
կհարգե զձեզ. կերևի, թե թյուրիմացություն կա ձեր
մեջը:

Պաղտասար.— Ի՞նչ թյուրիմացություն... աչքերովս
տեսա...

Սուր.—Թյուրատեսություն ուրեմն:

Յերկար.—Հաշտվեցեք, հաշտվեցեք, տեր Պաղտասար:

Կիպար.—Անկարելի յէ:

Սուր.—Կխնդրեմ քիչ մը դուրս յեկեք և առանձին
թողեք զմեզ, վոր խորհրդակցինք:

Տ Ե Ս Ի Լ Թ.

ՓԱՅԼԱԿ, ՅԵՐԿԱԹ, ՍՈՒՐ հետո ՍՈՂՈՄԵ.

Փայրակ.—Ո՛հ, ժամավաճառ չըլլանք. աշխատինք դար-
մանելու այն փնասն, զոր մենք ըրինք այսոր բացակա
գտնվելով մեր վաճառատունեն: Ոգուտ քաղենք ուրեմն
այս կորսված որեն և ջանանք արդյունավորել զայն:

Յերկար.—Համամիտ եմ ձեզի:

Սուր.—Շատ իրավունք ունիք:

Փայրակ.—Կանչենք ուրեմն Սողոմեն և զրուցենք
իրեն, վոր մեզի քիչ մ'ընտիր ողի, կտոր մ'ապուխտ,
կտոր մը պանիր, կտոր մը ձիթապտուղ, կտոր մը հաց,
կտոր մը խորոված ձուկ, կտոր մը...

Սուր.—Յե՛վ քիչ մը զվարճանանք, այնպես չե՞:

Փայրակ.—Այո՛, և արդեն այսորվան համար ուրիշ
գործ չունինք, մեր այս ավուր նիստն բավական արդյու-
նավետ յեղավ:

Յերկար.—Դատաստանական խորհրդո անդամ ընտրը-
վելնես ի վեր ասանկ արդյունավոր և կանոնավոր նիստ
ըրած չունեյինք:

Սուր.—Անուշին և Կիպարին խնդրագրերն մեր ուշա-
դրության նյութ ըրինք նախ և արդարությունը քիչ մը
յերևան բերինք. մնաց Պաղտասարին ամբաստանագիրն,
զոր ողի խմելով ալ կրնանք մեր խորհրդածության առ-
արկա ընել, թող վոր մեր ընտրած մասնաճյուղն ալ այսոր
զբաղված է ստուգելու, թե Կիպար և Անուշ ճշմարտա-
պես տեսակցա՞ծ են վատահամբավ տան մեջ: Ավելորդ է
ըսել, թե մասնաճյուղին ներկայացնելիք անդեկագրեն
կախումն ունի մեր ընելիք տնորինությունը, թեև ըստ
իս Պաղտասար պարզապես զրպարտիչ մ'է:

Յերկար.—Անպիտանին մեկն է:

Փայրակ.—Վերջապես արդարությունը չկորսվիր. այս
կարծիքես չեմ խախտիր բնավ:

Սուր.—Ճշմարիտ է. ստությունն, անիրավությունն
և զրպարտությունն միշտ կխայտառակվին:

Փայրակ.—Ձեռքս խղճիս վրա դնելով կրնամ վկայել,
թե մեր ստանձնած պաշտոնն խղճի մտոք կը կատարենք
և այսոր բավական գործ տեսանք: Բայց ի՞նչ ոգուտ. մեր
մեջ գործ տեսնողն ալ չտեսնողին հավասար պատիվ
կվայելեն:

Յերկար.—Յեթե ազգային մյուս ժողովներն, խոր-
հուրդներն, հանձնաժողովներն և այլն մեզի պես աշխա-
տեյին, ազգն քանի մը տարվան մեջ զգալապես կհառաջ-
դիմեր: Բայց ո՞վ պիտի ճանչնա մեր յերախտիքը...

Փայրակ.—Գոցեք այս կետը և Սողոմեն կանչենք:
(Ձանգա կը հնչեց ունելով) Սողոմե՛, Սողոմե՛, Սո-
ղոմե՛... (Սողոմե կ'մտնէ) Տիկին Սողոմե, դուն տան
տիկին մեկն ես, մեզի սանկ քիչ մ'ողի, կտոր մ'ապուխտ,
կտոր մը պանիր, կտոր մը...

Սողոմե.—Գլխուս վրա, հիմա, անմիջապես...

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ.

Բռնապետ Ե անվանում Հ. Պարոնյանը քաղաքավարութ-
յունը և հակադրում այն բնության որենքին: Պարոն-
յանին զբաղեցնող «քաղաքավարությունը» բուրժուական
հասարակական կարծիքն է, վոր իր ճնշող թաթը դնում է
անհատների կամքի և ցանկության վրա և թելադրում
կենցաղավարական ընդունված ձևեր, վորոնք հաճախ հա-
կառակ են առողջապահության և բնականոն կյանքին:
Ավելի ցայտուն են այդ «քաղաքավարության» պակա-
սավոր կողմերը մանավանդ հետամնաց յերկրներում, ուր
հասարակության «վերին խավերը» յուրացնում են «քա-
ղաքավարության» մեծ մասամբ արտաքինը, կեղևը, հե-
տևում կուրորեն ընդունված «մոդային»: Այդ «քաղաքա-
վարության» դեմ է ընդվզում Պարոնյանը՝ խարաղանելով
նրա փաստակար և բացասական կողմերը: Գլխավորապես
կենցաղային թերություններն են, ուրեմն, զբաղեցնում
Պարոնյանին «Քաղաքավարության փաստերը» գրվածքում:

Յերկու հատված ենք տալիս միայն «Քաղաքավարու-
թյան փաստեր»-ից — «Կոշիկը», ուր խարաղանվում է
«մոդան» և «Մեկիտոս աղան», վոր աղքատ և հարուստ
բարեկամների հարաբերության զավեշտական պատկերն է
տալիս: Հատվածները տալիս ենք վորոշ կրճատումներով:

Հ. Հով.

Կ Ո Շ Ի Կ Ը

Սեդրաք աղան կոշկակարի մը խանութը կը մտնէ:

— Բարեկամ, կըսէ կոշկակարին, զույգ մը կոշիկ
կուզեմ ապսպրել (պատվիրել):

— Շատ աղեկ:

— Կոշիկներուն քթերը նեղ ըլլալու չեն:

— Հիմիկվան մոդայեն չեք ուզեր ըսել ե:

— Միայն կուզեմ, վոր վոտքս կոշիկի մեջ կարենա
շարժիլ. նեղ վոտքի աման չեմ ուզեր, վորովհետեւ նասը
(կոշտ, մազոլ) ունիմ:

— Գլխուս վրա, ձեզի անանկ կոշիկ մը շինեմ, վոր
թե մոդային համաձայն ըլլա և թե ձեր վոտքերը չսխմեն:

— Յեթե կարենաս գոհ ընել զիս, միշտ քու խա-
նութը կուգամ:

— Վստահ յեղեք:

Կոշկակարը Սեդրաք աղային վոտքի չափը կառնէ և
կիմացնէ, թե քանի մ'որեն պատրաստ պիտի ըլլան կո-
շիկները:

Սեդրաք աղան քանի մ'որեն կերթա կոշկակարին:

— Պատրաստ են կոշիկներս:

— Այո՛, պատրաստ են:

Կոշկակարին աշակերտը Սեդրաք աղային կներկայա-
ցնէ կոշիկները:

— Յեղբայր, կըսէ Սեդրաք աղան, ասոնք պզտիկ են:

— Ընդհակառակն, մեծ են:

— Ասոնց քիթերը նեղ են:

— Չեմ կարծեր, շատ լայն քիթերն այսոր մաք-
սուլ (հարզի) չեն: Կաղաչեմ, անգամ մը ձեր վոտքն
անցունեյիք սա կոշիկները:

Սեդրաք աղան կնստի: Կոշկակարին աշակերտը քա-
ռակուսի տախտակ մը կգնէ Սեդրաք աղային վոտքերուն
տակը: Սեդրաք աղան կձեռնարկէ նոր կոշիկներն հագնե-
լու: Կոշիկները կապստամբին:

— Վոտքդ ուժով կոխէ, կպոռա կոշկակարն:

— Վոտքի վրա յել ու այնպես կոխէ, կըսէ կոշկա-
կարին քալֆան (ոգնական, քարգյահ):

— Ուժով վոտքդ գետինը զարկ, կխրատես կոշկակարին աշակերտը:

— Ծո՛ւ, սա փոշիյեն ցանե քիչ մը կոշիկներուն մեջ, վոր Սեդրաք աղային վոտքերը դյուրությամբ սահին ու մտնեն, կհրամայե կոշկակարն պզտիկ աշակերտին:

Հրամանը կը կատարվի:

Կոշիկներն հաստատամիտ են:

— Եոֆ, քրտնեցա, կըսե Սեդրաք աղան յերեսը թթվեցնելով: Քեզի քառասուն անգամ ապսպրեցինք, վոր մեծ ըլլան, լայն ըլլան, յերկար ըլլան:

— Կերեա, վոր վոտքերդ ալ քրտնած են և անոր համար...

— Ձե, ճանրմ, կոշիկները նեղ են:

— Անգամ մը հագնիս նե, կը բացվին: Լայն վոտքի ամաններն ավելի կվնասեն նասըրներուն:

— Ձեմ կընա կոր հագնիլ:

Կոշկակարն քալֆայովն և աշակերտներովն Սեդրաք աղային ոգնելու կերթա: Յերկու հոգի Սեդրաք աղային թեք կմտնեն, կոշկակարը Սեդրաք աղային մեկ վոտքը կըռնե և կաշխատի կոշիկին մեջ դնել: Ամբողջ կոշկակարյան խումբը կքաջալերե Սեդրաք աղան.

— Հա, հա, կմտնա կոր...

— Քիչ մ'ալ համբերություն...

— Քիչ մ'ալ հաստատամտություն...

— Ձեմ ուզեր, թող տվեք հանեմ վոտքս. հարյուր անգամ ապսպրեցի, վոր յես մոդա չեմ ուզեր, վոտքերուս հանգստությունը կուզեմ...

— Քիչ մ'ալ դայրեթ (դեյրաթ) ըրե, եֆենտի:

— Ղայրեթնիդ ալ գետնին տակը անցնի, կոշիկնիդ ալ... թող տվեք վոտքս, վաղ անցա:

— Բարկանալու իրավունք չունիք, Սեդրաք աղա:

— Չունիմ, աղբար, չունիմ. դուք իրավունք ունիք բարկանալու. թույլ տվեք սա վոտքս քաշեմ:

Կոշկակարն ուժով բռնած ե Սեդրաք աղային վոտքեն, վորուն իննը տասներորդ մասը մտած ե կոշիկի մեջ:

— Շատ բժախնդիր եք, Սեդրաք աղա:

Սեդրաք աղան կզգա թե գերի բռնված ե, ուստի անձնատուր կըլլա կոշկակարին, վոր յուր խումբովը կհաջողի կոշիկներն անցունել յուր հաճախորդին վոտքերուն:

— Տեսա՞ր, ինչպես աղեկ յեղավ... վոտքի վրա կայնե քիչ մը... մինչև տուն յերթաս նե, վոչ ցավ մը կմնա, վոչ բան մը... սանկ քալե, նայիմ...

— Ինչպե՞ս քալեմ, ճանրմ, նասըրներս կցավին կոր... հանեցեք սվոնք:

— Քիչ մը խոսք մտիկ ըրե, Սեդրաք աղա, մինչև տուն գնաս, վոտքերդ պիտի վարժվին ու...

— Քիչ մը լայնեկել շինեյիք նե՝ չե՞ր ըլլար:

— Չըլլար, Սեդրաք աղա, չըլլար. ամեն խանութ նամուս ունի. մենք մեր խանութին պատիվը չենք կրար կոտրել անանկ մեծ, լայն ու տձև կոշիկներ կարելով. ամեն մարդ իր գործը գիտե:

— Աղեկ, աղեկ, ի՞նչ պիտի տանք:

— Վոսկի մը:

— Առեք:

— Շնորհակալ եմ. մեզի մի մոռնաք, Սեդրաք աղա:

Սեդրաք աղան այդ կոշիկներով դուրս կելնե կոշկակարին խանութեն, նասըրներու ցավեն ամեն քայլափոխին հառաչելով, յերբեմն ալ արտասովելով: Կզգա վերջապես, թե չպիտի կընա շարունակել ճամփան, զբոսարան մը կմտնե, բազմոցին վրա կնստի և կոշիկները հանել կուզե: Չհաջողիր: Սրճարանին սպասավորը կկանչե և կաղաչե, վոր կոշիկներն քաշե: Սպասավորը բոլոր ուժը կսպառե, կարելի չե կոշիկները հանել: Իմաց կտրվի կոշկակարին, վոր ֆալժային ընկերակցությամբ կհասնի ու մեծ դժվարությամբ կհաջողի ազատել Սեդրաք աղան յուր

վոտքերուն ձեռքեն: Սեդրաք աղան կհազնի հին կոշիկները, զորս կոշկակարի խանութեն հետն առած երև կհանդատանա:

— Բնավ դիմանալ չգիտեք կոր, Սեդրաք աղա, կըսե կոշկակարը. ձևավոր և ճաշակավոր բան մը հազնելու համար քիչ մը ահւան սխմելու յե մարդս...

Հետեյալ որը Սեդրաք աղան շուկա կերթա, լաբճին (չուստ) մը կգնե, կհազնի ու գործին կերթա:

Գիտողությունները կսկսին.

— Սա Սեդրաք աղան շատ թոհաֆ (զարմանալի) մարդ ե:

— Տիվանե (խելագար) ե պարզապես:

— Յես ալ տեսա, լաբճին մը անցուցեր ե վոտքը...

— Խայտառակություն ե:

— Ինչ մեղքս պահեմ, հետը պտտելու կամչնամ կոր:

— Աս վոտքերով ընկերությանց մեջ մտնել կարելի չե:

Այս դիտողություններն Սեդրաք աղային ահանջը կհասնին: Սեդրաք աղան կհամոզվի, թե քաղաքավարություն չհակառակիր նաաղորի, բայց սարսափելի թշնամի յե ըսպճիկի, Սեդրաք աղան կստիպվի հանել լաբճիկները և ընդունիլ մոդայի համաձայն կոշիկներն ու անոր հարվածներն:

ԱԿՍՄՍ. ՀՅՈՒՐԸ.

— Մեղիտոս աղա, ամոթ յեղավ, գիշեր մը չկըցինք եֆենտին յերթալ: Այս գիշեր յերթանք, քանի մը ժամ կնստինք, կդառնանք:

— Կնիկ, հոգնած եմ, այնքան մտմտուք ունիմ, վոր զբոսնելու, ժամանակ անցունելու ախորժակ չունիմ:

— Կնայիմ, վոր պարապ տեղը կբարկանաս:

— Կբարկանամ: Ամեն իրիկուն ե աս. յերթանք, այս գիշեր յերթանք, յերթանք այս գիշեր, այս գիշեր չեր-

թանք նե, չըլլար... գլուխս ուռեցավ, հատա, լմնցա նե... քանի որվան կյանքս մնաց... յերթաաաաանք... կլմնցեն ակ:

Կինը կպատրաստե սեղանը, կբերե կերակուրները: Կուտեն, կելնեն սեղանեն, այցելության հագուստները կհազնին և ճամբա կելնեն:

Եֆենտին, վորու տունը կերթային Մեղիտոս աղան ու կինն՝ Մեղիտոս աղային կնոջ ազգականն ե: Ընդհանրապես վոր կանայք հարուստ ազգական և աղքատ ամուսին ունին, իրենց հարուստ ազգականին վրայոք կխոսին իրենց ամուսնուն շաբաթը առ նվազն չորս անգամ յերկյերկու ժամ: Յեվ ի՞նչ խոսքեր...

— Գիտցած ըլլաս, վոր շատ չեմ նստիր, ըսավ Մեղիտոս աղան կնոջն, յերբ մոտեցան եֆենտին տունը:

Բաղխեցին և բացվեցավ:

— Հրամեցեք, տիկին, ըսավ հարգանք տանն սպասավորն և տիկնոջ թեք մտնելով սանդուղիսեն վեր հանեց:

Մեղիտոս աղան սանդուղիսին առաջին աստիճանին վրա նստեցավ և հանեց յուր վոտքի ամաններն, վոր քանի մը կարկրաանք ունեյին: Հետո վեր յելավ, զգացված սպասավորի կողմեն իրեն յեղած պարզ ընդունելութենն և մտավ ընդունելության սենյակը:

Եֆենտին քանի մը բարեկամաց հետ թուղթ կը խաղար: Մեղիտոս աղային տիկինն եֆենտին տիկնոջը քովը նստած եր: Վահրամս ալ, եֆենտին տղան, հազիվ յերկու տարեկան, սենեկին մեջ կպտրտեր վանկեր շինելով:

Յերբ Մեղիտոս աղան ներս մտավ, եֆենտին կինը գլուխը կես առնքիմեքոն ծռեց, վորպես թե հյուրին բարեն առնելու համար, եֆենտին չտեսնել կեղծեց Մեղիտոս աղան:

Մեղիտոս աղան քիչ մ'ալ զգացվեցավ և մըմուաց քթին տակեն «յերթանք, յերթանք, ահա յեկանք»:

Եֆենտին բարեկամները քաջալերված անշուշտ այն

պաղուծենեն, զոր եֆենտին ցույց տվավ Մելիտոս աղային, սկսան իրենց մեջ խոսիլ.

— Ի՞նչ անկիրթ մարդ ես:

— Ո՞վ ե այդ վայրենին:

— Կոշիկները վարը ձգեր ես:

— Անասունի կը նմանի:

Մելիտոս աղան կիմանա այս խոսակցությունն, բայց քաղաքավարությունը կախանջե, վոր կըլլե այդ ծանր խոսքերն:

Թղթի խաղը կշարունակվի: Եֆենտին մերթ ընդ մերթ հետևյալ հարցումները կուղղե Մելիտոս աղային տիկնոջ.

«Ինչպէս եք, նայինք:

Աս ո՞ւր ե, չեք յերևար կոր:

Հանգիստ ես»:

Մելիտոս աղան, վոր բազմոցին վարի կողմը նստած եր և ամեն պատրաստություն տեսած եր կանխավ, եֆենտին կողմե գալիք հարցմանց քաղաքավարությամբ և ակնածությամբ պատասխանելու համար՝ ակն ունեւր (սպասում եր) եֆենտին բարեկին գալստյան:

Մելիտոս աղային կինն յերբեմն-յերբեմն ակնարկություն կընեւր երկանն, վոր կթարգմանվեւր այսպէս.

— Ինչո՞ւ միս մինակ նստեւր ես, քովերնիս չգնաս:

Յեւ Մելիտոս աղան այս ակնարկության կպատասխանեւր այնպիսի նշաններով, վոր կնշանակեյին—գետնին տակը անցնիս, վոր բռնությամբ հոս բերիւր զիս:

Յեւ հա՛ն Վահրամն բառեր թոթովելով Մելիտոս աղային կմոտենա, Մելիտոս աղային գիրկը յեղնել կուգե: Մելիտոս աղան կգրկե Վահրամն և կսկսի՝ *սանճանա սանճանա սանճանճան*:

Եֆենտին Մելիտոս աղային գրկացը մեջ Վահրամին խաղալն տեսնելով՝

— Ո՞՞, ըսավ, Մելիտոս աղան ալ հոս ե յեղեր,

յէրբ յեկավ, չիմացա գալը, ինչո՞ւ մեկ ծակը քաշվեւր նստեւր ես, չմոտենաս:

— Յեա ալ հոս եմ, տիկնոջս հետ յեկա, գալս չիմացաք, հոս հանգիստ եմ,—կպատասխանե Մելիտոս աղան:

— Իրավ, ինչո՞ւ մենակ նստեւր եք, մեր քովը յեկեք նստեցեք,—կըսեն եֆենտին բարեկամներն, վոր քիչ մ'առաջ անկիրթ և վայրենի պատվանուններով պատված եյին Մելիտոս աղան:

Վահրամը Մելիտոս աղային պէիսերը կքաշե, մատն անոր աչքն կխոթե և կուգե, վոր *սանճանա* ընե զինք:

Մելիտոս աղան կհոգնի, բայց չկրնար գետինը ձգել տղան, վորովհետեւ թող չեն տար:

Ի՞նչպէս:

— Վահրամը վորքան կսիրե կոր Մելիտոս աղան. չնայի՞ս, անկե բաժնվիլ չուգեւր կոր,—կըսե Վահրամին մայրը:

— Բոլոր տղաքները կսիրեն Մելիտոս աղան,—կպատասխանե Մելիտոս աղային կինը:

— Ձանձրություն տվավ քեզի, գետինը ձգե, Մելիտոս աղա,—կավելցնե Վահրամին մայրը:

— Ձանձրություն չտար ինձի,—կպատասխանե Մելիտոս աղան, վոր թևերն վերցնելու կարողություն չունի: Վահրամը ցատկիլ ցատկուտիլ կուգե:

Մելիտոս աղան կգոհացնե Վահրամին կամբը:

— Հոգնեցար, Մելիտոս աղա, վար ձգե,—կըսե նորեն Վահրամին մայրը:

— Չհոգնեցա, հոգ մ'ընեք, տիկին,—կպատասխանե Մելիտոս աղան շնչաւաւ և մեկուսի կանիծե ժամն, հորում եֆենտին տունը վտաք կոխեց:

Խահվե կբերեն:

Մելիտոս աղան առիթեն ոգուտ քաղելով Վահրամը քովը կնստեցնե:

Վահրամ կսկսի լալ բարձրաձայն: Մելիտոս աղան կստիպվի նորեն գրկել Վահրամն և խահվեն այնպէս խմել:

Վահրամ հանգիստ չկայներ, կշարժի և խահվեն
կթափվի Մելիտոս աղային շապիկին վրա:

— Վահրամ, Վահրամ,—կըսե մայրն,—առ ի՞նչ ըրիր:

— Վնաս չունի, ֆնաս չունի, կպատասխանե Մելի-
տոս աղան՝ ի ներքոստ ակռաները կըճտելով:

Միջադեպը կփակվի:

Վահրամ կուզե Մելիտոս աղային կռնակն յեղնել:

Կը հնազանդի Մելիտոս աղան:

Վահրամ կը կամի, վոր Մելիտոս աղան վոտք յեղնե:

Կհոժարի Մելիտոս աղան:

Վահրամ կփափագի, վոր Մելիտոս աղան քալե:

Մելիտոս աղան կհամառի:

Վահրամ կսկսի պոռալ:

— Սըվոր ձայնը կտրեցեք,—կպոռա եֆենտին:

Յեվ Մելիտոս աղան կսկսի քայլել:

— Շատ բան, շատ բան, չթողուց մարդն, վոր քիչ մը
նստի,—կմոմա եֆենտին:

— Արդեն Մելիտոս աղան ալ կախորժի կոր տղաք-
ներեն, եֆենտի,—կըսե Վահրամին մայրը: Այսչափ ալ
խենթենալ տղայոց համար: Վահրամը քեզի տանք, ան
գնա, Մելիտոս աղա:

— Կըլլա,—կպատասխանե Մելիտոս աղան ճանա-
պարհորդելով սենյակին մեջ:

— Հոգնեցար նե՛ ձգե, Մելիտոս աղա:

— Վնչ (մեկուսի), աներեսներ, չեք հասկնար կոր
թե հոգնած եմ:

Մելիտոս աղան, վորուն, ինչպես ըսինք, ուսերուն
վրա բազմած եր Վահրամ, վորոտման ձայներ կլսե: Կա-
րևորություն չտար, վորովհետև քաղաքավարության հա-
կառակ ե ամեն բան լսելը: Քիչ մը յետքը ծոծրակին վրա
տաք-տաք անձրև գալը կզգա: Բարկութենե կկատղի, դուրս
կտանի բեռը և սպասուհիույն կհանձնե:

Վահրամ կպոռա, կը կանչե, կուլա: «Քըհ», կըսե Մե-
լիտոս աղային և կապտակե դայն պստիկ թաթիկներովը:
Մելիտոս աղան թող չտար. սպասավորները կը հրավիրեն
Մելիտոս աղան քանի մը ապտակ առնուլ, վորպեսզի
տղան լռե. յեթե վոչ, կըսեն, եֆենտին տղուն ձայնն առ-
նելուն պես կսրդողի (կբարկանա):

Մելիտոս աղային համբերությունը կհատնի, դուռը
կբանա, սենյակ կմտնե ու—ներեցեք, կըսե, ձեր հրամա-
նովն յերթանք, վորովհետև վաղը առտու կանուխ պիտի
յեղնեմ:

— Մելիտոս աղա, կանուխ ե դեռ,—կպատասխանե
եֆենտին կինը:

— Վոչ, ժամանակ ե:

— Դուք գնացեք, տիկինը թող նստի քիչ մ'ալ:

— Դուն գնա, յես վերջը կուգամ,—կըսե կինը:

— Շատ աղեկ,—կպատասխանե Մելիտոս աղան շեշ-
տով մը, վորու հավատարիմ թարգմանությունն ե՝

— Առնելիքդ ըլլա:

Յեվ Մելիտոս աղան տուն կդառնա և կսպասե տիկ-
նոջը, վոր վրեժը լուծե:

Յերեք ժամ հետո տուն կուգա կինն ու վեր յեղնելով՝

— Մելիտոս աղա, զարմանալի մարդ մ'ես. տեղ մը
չես կընար նստիլ. ինչո՞ւ աճապարեցիր (շտապեցիր):

— Ինչու աճապարեցի՞...

— Քիչ մ'ալ նստեցիր, մեկ տեղ կուգայինք:

— Հոգիս բերանս բերին...

— Գե՞շ յեղավ. ժամանակ անցուցինք քիչ մը:

— Անցուցինք, տղան խաղցուցինք, խահվեն վրաս
թափեցինք, իշու պես ուսերուս վրա առի Վահրամիկ պեյը
և պտրտցուցի, վրաս մնառեց, վերջն ալ ապտակ կերանք...
անպիտաններ... ի՞նչ անկիրթ մարդ են յեղեր ասոնք.
ատանկ կմեծցնեն տղա...

— Դուռն ալ յերկար կընես, Մելիտոս աղա:

— Յերկար մի կընեմ... տուներնին հյուր գացած եմ, նստեցնեն զիս՝ ինչպես ես, աղեկ ես, Մելիտոս աղա, ըսեն, սիկարա հրամցնեն... գացի, չգացի, տղան ձեռքս տվին և չորս ժամ շարունակ տղան ձեռքս կրեցի... ավանակ մը գտան ա, հոգերնի՛ն ե... ի՛նչ ըսեմ յես իմ բնավորությանս, վոր յերեսս չբռներ, չեմ խոսիր ու յետքը ինքըզինքս կուտեմ. ազնվականություն չունին, չունին:

— Մի ըսեր ատանկ խոսքեր, եֆենտիին ականջը կերթա:

— Թող յերթա:

— Կբարկանա:

— Թող բարկանա:

— Ինչո՞ւ բարկանա... չտեսա՞ր գորգը, մեծ հայելիները...

— Ինչո՞ւս պետք, գորգ ունեցողը, մեծ հայելիներ ունեցողն անկի՛րթ ըլլալու ե անպատճառ:

— Ըսել կուզեմ, վոր ատանկ մեծ մարդոց հետ իյնալն աղեկ չէ: Արդեն յեղածն ի՛նչ ե վոր... տղան քիչ մը խաղցուցիր... ի՛նչ փսաս ունի... մեկ բանը կառնես կանցնիս դուռն ալ...

Մելիտոս աղան չպատասխաներ, բայց միջև առավոտ չկրնար քնանալ բարկությանը պատճառով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I ՊՐԱԿ.—1) Հակոբ Պարոնյան (կենսագրական): 2) Մեծապատիվ մուրացիկաներ: 3) Պտույտ մը Պոլսո թաղերու մեջ: II ՊՐԱԿ.—1) Արեւելյան ատամնաբույժ: 2) Պաղտասար աղբար: 3) Բաղաբաժարության ֆլանները: III ՊՐԱԿ.—1) Ազգային ջոջեր: 2) Հոսոսի ձեռատետրը: 3) Միծաղ:



ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

24641

50125

Երվ



А. ПАРОНЯН.

Избрани. сочинения.

Выпуск II.

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.
Москва, Никольская, 10.